

Հրաշալիքի Որոնումները
Գլուխ I

Վերադարձ Հնդկաստանից: Պատերազմը և <հրաշալիքի որոնումները>:
Վաղեմի մտքեր: Դպրոցների խնդիրը: Հետագա ճամփորդությունների
ծրագրեր: Արևելքը և Եվրոպան: Ծանոթագրություն մոսկովյան թերթերից
մեկում: Հնդկաստանի մասին դասախոսություններ: Գ.-ի հետ հանդիպումը:
<Ականավոր մարդ>: Առաջին գրույցը: Գ.-ի կարծիքը դպրոցների
վերաբերյալ: Գ.-ի խումբը: “Ճշմարտության առկայծումներ”: Հետագա
հանդիպումներ և գրույցներ: Գ.-ի մոսկովյան խմբի ձևավորումը:
Վարձատրություն և աշխատանքային միջոցների հարցը: Գաղտնիության
խնդիրը և աշակերտների կողմից ստանձնած պարտականությունների
հարցը: Զրույց Արևելքի մասին: “Փիլիսոփայություն”, <տեսություն> և
<պրակտիկա>: Ինչպե՞ս է ստեղծվեց համակարգը:

Գ-ի գաղափարները: <Մարդը մեքենա է>, որը ղեկավարվում է
արտաքին ազդեցությամբ: Ամեն ինչ <պատահում է>: Ոչ ոք ոչինչ չի
<անում>: Որևէ բան <անելու> համար անհրաժեշտ է <լինել>: Մարդը
պատասխանատու է իր գործողությունների համար, իսկ մեքենան՝ ոչ:
Անհրաժեշտ է արդյոք հոգեբանությունը մեքենաների ուսումնասիրության
համար: <Փաստերի> խոստումը: <Արդյո՞ք հնարավոր է կասեցնել
պատերազմները: Զրույց մոլորակների և լուսնի մասին. դրանց դիտարկումը
որպես կենդանի էակներ: Արևի և Երկիր մոլորակի <գիտակցությունը>:
<Սուբյեկտիվ> և <օբյեկտիվ> արվեստը:

Եզիպտոսում, Յեյրոնում և Հնդկաստանում բավականին երկարատև ճամփորդություններից հետո 1914թ. նոյեմբերին, այսինքն՝ առաջին համաշխարհային պատերազմի սկզբին, վերադարձա Ռուսաստան: Երբ պատերազմը սկսվեց, ես Կոլումբիայում էի: Կտրել-անցնելով Անգլիան՝ այնտեղից ետ վերադարձա:

Մեկնելով Պետերբուրգից՝ իմ ճանապարհորդության մեկնարկին, ասեցի, որ գնում եմ <փնտրելու հրաշալին>: Շատ բարդ է սահմանել <հրաշալին>: Սակայն այդ բառի նշանակությունը ինձ համար միանգամայն հստակ էր: Ես վաղուց էի հանգել այն եզրակացության, որ հնարավոր չէ խուսափել հակասությունների լաբիրինթոսից, որում մենք ապրում ենք: Դա անելու միակ միջոցը բոլորովին նոր ճանապարհ ընտրելն է, մի ճանապարհ, ծանոթ չենք, կամ որով երբևէ չենք քայլել: Սակայն, թե որտեղից էր սկիզբ առնում այս նոր կամ մոռացված ճանապարհը, ինձ հայտնի չէր: Սակայն արդեն այդ ժամանակ ես գիտեի անհերքելի այն փաստը, որ բարակ թաղանթով պատված խափուսիկ իրականությունից այն կողմ գոյություն ունեւ մեկ այլ իրականություն, որից մենք ինչ-ինչ պատճառներով տարանջատված էինք: «Հրաշալին» ներթափանցումն էր այդ անհայտ իրականություն: Եվ ես կարծում էի, թե դեպի անհայտություն տանող ճանապարհը կարելի էր գտնել արևելքում: Ինչու՞ հենց արևելքում, դժվար էր ասել: Գուցե այս մտահաղացումը փոքր-ինչ ռոմանտիկ էր. սակայն հավանաբար դա հետևանք էր այն համոզմունքի, որ Եվրոպայում ամեն դեպքում որևէ բան գտնել հնարավոր չէր:

Բոլոր այն եզրակացությունները, որոնց հանգել էի փնտրտուքներիս արդյունքում, խճճվեցին վերադարձիս ճանապարհին և Լոնդոնում անցկացրած մի քանի շաբաթների ընթացքում. դրա պատճառն էր պատերազմի խելացնոր անհիմաստությունը, մթնոլորտը հազեցնող զգացմունքները, գրույցները և թերթերը, որոնք հակառակ կամքիս հաճախ ազդում էին ինձ վրա:

Սակայն վերադառնալով Ռուսաստան և գիտակցելով բոլոր այն մտքերը, որոնցով լեցուն մեկնել էի՝ ես զգացի, որ իմ որոնումները և դրանց հետ կապված յուրաքանչյուր բան ավելի կարևոր էին, քան այն ամենը ինչ տեղի էր ունենում կամ կարող էր տեղի ունենալ «ակնհայտ անհերթությունների աշխարհում»:¹

¹ Վերջինս վերաբերում է մի փոքրիկ գրքի, որն ունեի երեխա ժամանակ: Գրքի վերնագիրն էր «Ակնհայտ Անհերթություններ», որը պատկանում էր Ստուպինի «Փոքր գրադարանին» և պարունակում էր այնպիսի նկարներ, ինչպիսիք են օրինակ՝ մի մարդ, ով մեջքին դրած քար է տալիս մի տուն, մի կառք՝ քառակուսի անիվներով և նմանատիպ նկարներ: Այդ գիրքը մեծ տպավորություն էր գործել ինձ վրա, քանի որ ինձ համար անհասկանալի էր, թե ինչու էին այդ գրքում **պատկերված շատ** նկարներ անհերթ իմ համարվում: Դրանք իրականում գոյություն ունեցող սովորական բաներ էին: Ավելի ուշ ես սկսեցի մտածել, որ գիրքում պատկերված էր իրական կյանքից դրվագներ, որովհետև մեծանալով ես ավելի ու

Ես եկա այն եզրակացության, որ պատերազմը հարկավոր էր ընդունել որպես կյանքի սովորական աղետալի մի պայման, որում մենք պետք է կարողանայինք ապրել և աշխատել՝ փնտրելով մեր հարցերի և կասկածների պատասխանները: *Պատերազմը՝* մեծն եվրոպական պատերազմը, որի հավանականությանը ես չէի ցանկանում հավատալ, և որի եղելիությունը երկար ժամանակ չէի ցանկանում ընդունել, դարձել էր իրականություն: Մենք *ներգրավված էինք պատերազմի մեջ* և ես դիտարկում էի դա որպես *momento mori*՝ հիշեցում այն մասին, որ մենք մահկանացուներ ենք, որ անհրաժեշտ էր շտապել և չհավատալ դեպի անհայտություն տանող «կյանքին»:

Պատերազմը ինձ անձամբ վնաս չէր կարող հասցնել, ամեն դեպքում քանի դեռ վրա չէր հասել վերջնական աղետը, որը կարծես անխուսափելի էր Ռուսաստանի և միգուցե ողջ Եվրոպայի համար, սակայն որը դեռևս մոտալուտ չէր թվում ինձ: Իհարկե այն ժամանակ վրահաս աղետը ժամանակավոր էր թվում, և ոչ ոք չէր գիտակցում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քայքայումը և կործանումը, որը մենք պիտի վերապրեինք հետագայում:

Ամփոփելով արևելքից և հատկապես Հնդկաստանից ստացված իմ տպավորությունները՝ պետք է խոստովանեմ, որ վերադարձիս իմ խնդիրը առավել բարդ և խրթին էր թվում, քան մեկնելիս: Հնդկաստանը և արևելքը ոչ միայն չէին կորցրել իրենց հրաշալի հրապույրը, այլ հակառակը՝ այդք հրապույրը ձեռք էր բերել նոր նրբերանգներ, որոնք մինչ այդ բացակայում էին: Ակնհայտ էր, որ ես անպայման մի բան կբացահայտեի այնտեղ՝ մի բան, որը Եվրոպայում վաղուց դադարել էր գոյություն ունենալ: Եվ ես հավատացած էի, որ ճիշտ ճանապարհ էի ընտրել: Սակայն միևնույն ժամանակ համոզված էի, որ գաղտնիքը ավելի առեղծվածային էր և ավելի խորն էր պահված, քան ես ենթադրում էի:

Հեռանալիս ես արդեն գիտեի, որ փնտրելու եմ *դպրոց* կամ *դպրոցներ*: Վաղուց էի եկել այդ եզրակացության: Ես հասկացել էի, որ անձնական, անհատական ջանքերը բավարար պայման չէին. անհրաժեշտ էր կապ հաստատել իրական և կենդանի մտքի հետ, որը ինչ-որ տեղ գոյություն ուներ, բայց որի հետ կապը մենք կորցրել էինք:

Այս ամենը ես գիտակցում էի: Սակայն դպրոցների գաղափարը ճամփորդություններիս ընթացքում շատ փոփոխությունների ենթարկվեց. մի կողմից այն դարձել էր առավել պարզ և հստակ, մյուս կողմից՝ ավելի սառը և հեռավոր: Այսինքն՝ ինձ համար դպրոցները կորցրել էին իրենց հեքիաթային բնույթը:

Մեկնելիս ես դեռևս թույլատրելի էի համարում դպրոցների հետ կապված անիրականության մի մասը: «Թույլատրելի» բառը թերևս սաստիկ հնչի այս դեպքում: Միգուցե ավելի ճիշտ կլիներ ասել, որ ես երազում էի դպրոցների հետ ոչ ֆիզիկական՝ «մեկ այլ հարթության» վրա կապ

ավելի էի համոզվում, որ ողջ կյանքը բաղկացած է «ակնհայտ անհեթեթություններից», իսկ **իմ հետագա փորձառությունը** ապացուցել այս համոզմունքը:

հաստատելու հնարավորության մասին: Հստակ չէի կարող բացատրել, բայց ինձ թվում էր, թե դպրոցի հետ սկզբնական շփման մեջ մտնելը արդեն իսկ կարող էր «հրաշալի բնույթ» ունենալ: Ես երագում էի, օրինակ, հեռավոր անցյալի դպրոցների՝ Պյութագորասի, Եգիպտոսի, Սուրբ Աստվածամոր տաճարը կառուցողների դպրոցների հետ կապ հաստատելու հնարավորության մասին: Ինձ թվում էր, որ նման շփում հաստատելու դեպքում կվերանային ժամանակի և տարածության անջրպետները: Դպրոցների գաղափարն ինքնին ֆանտաստիկ էր թվում ինձ, և այս գաղափարի հետ կապված ոչինչ չափազանց անիրական չէր կարող լինել: Ես որևէ հակասություն չէի տեսնում այս գաղափարների և Հնդկաստանում դպրոցներ փնտրելու իմ փորձերի միջև: Ինձ թվում էր, որ նման կապ ես հենց Հնդկաստանում կարող էի հաստատել, որը այնուհետև դառնալու էր մշտական և արտաքին միջամտություններից զերծ:

Վերադարձի ճանապարհին մի շարք հանդիպումներից և տպավորություններից հետո, դպրոցների գաղափարը դարձավ առավել իրական և շոշափելի և կորցրեց իր անիրական բնույթը: Դրա պատճառը հավանաբար այն էր, որ, ինչպես ես հետագայում հասկացա, անհրաժեշտ էր ոչ միայն որոնել «դպրոցը», այլ «ընտրություն կատարել», այսինքն՝ կարևոր էր մեր ընտրությունը:

Այն, որ դպրոցներ գոյություն ունեին, ես չէի կասկածում: Բայց միևնույն ժամանակ համոզվեցի, որ այն դպրոցները, որոնց մասին լսել էի և որոնց հետ կարող էի կապ հաստատել, ինձ համար չէին: Այդ դպրոցները կամ բացարձակ կրոնական, կամ կիսակրոն բնույթ էին կրում: Դրանք ինձ չէին գերում, մասնավորապես այն պատճառով, որ եթե իմ նպատակը լիներ կրոնական ուղի փնտրելը, ապա ես կարող էի դա անել Ռուսաստանում: Մյուս կարգի դպրոցները որոշ չափով սենտիմենտալ բարոյափիլիսոփայական բնույթ ունեին՝ ասկեթիզմի երանգներով, ինչպիսիք էին օրինակ Ռամակրիշնայի աշակերտների կամ հետևորդների դպրոցները: Այս դպրոցներին հարող հաճելի մարդկանց հանդիպեցի, սակայն իմ կարծիքով նրանք չունեին ճշմարիտ գիտելիքներ: Այսպես կոչված «յոգայի դպրոցները», որոնց հիմքում ընկած էր տրանսային վիճակի հասնելը, իմ կարծիքով «սպիրիտուալիստական» բնույթ էին կրում: Ես նրանց չէի կարող վստահել. նրանց բոլոր ձեռքբերումները կամ ինքնախաբեություն էին, կամ ինչպես ուղղափառ խորհրդապաշտները կկոչեին ռուսական վանական գրականության մեջ, «գեղեցկություն» կամ «գայթակղություն» էին:

Գոյություն ուներ մեկ այլ տեսակի դպրոց, որի հետ ես չէի կարող կապ հաստատել և որի մասին ես միայն լսել էի: Այս դպրոցները շատ մեծ խոստումներ էին տալիս, սակայն դրանք միաժամանակ մեծ պահանջներ էին ներկայացնում: *Նրանք պահանջում էին ամենինչ միանգամից:* Անհրաժեշտ կլիներ մնալ Հնդկաստանում և Եվրոպա վերադառնալու մտքից հրաժարվել, հրաժարվել նաև իմ սեփական գաղափարներից, նպատակներից, ծրագրերից և ընտրել ճանապարհ, որի մասին ես նախապես ոչինչ չգիտեի:

Այս դպրոցները ինձ շատ էին հետաքրքրում: Հետաքրքրում էին նաև դրանց հարող մարդիկ, ովքեր ինձ պատմում էին այդ դպրոցների մասին և առանձնանում էին մնացած հասարակ մարդկանցից: Այնուամենայնիվ, ինձ թվում էր, որ գոյություն ունեին առավել ռացիոնալ բնույթի դպրոցներ, և որ մարդն իրավունք ուներ որոշ չափով իմանալ, թե որ ուղղությամբ է շարժվում:

Մինևույն ժամանակ ես եկա այն եզրակացության, որ ինչ դպրոց էլ, որ լինի դա՝ միստիկ, էզոթերիկ, յոգայի, այն պետք է գոյություն ունենա հասարակ երկրային հարթության վրա, ինչպես ցանկացած այլ դպրոց՝ գեղարվեստի, պարարվեստի, բժշկության: Ես հասկացա, որ մեկ այլ «հարթության» վրա գտնվող դպրոցները թուլության նշան են, որտեղ իրական որոնումներին գալիս են փոխարինելու երազանքները: Հենց այդ երազանքներն էին դեպի հրաշալին տանող ուղու վրա կանգնած հիմնական խոչընդոտները:

Հնդկաստան ուղևորվելիս ես ճանապարհորդելու հետագա ծրագրեր մշակեցի: Այս անգամ որոշեցի ուղևորությունս սկսել մահմեդական արևելքից՝ հիմնականում Ռուսաստանի Կենտրոնական Ասիայից և Պարսկաստանից: Սակայն դրանցից ոչ մեկինք վիճակված չէր իրականանալու:

Հատել-անցնելով Նորվեգիան, Շվեդիան և Ֆինլանդիան՝ ես Լոնդոնից վերադարձա Պետերբուրգ, որն արդեն վերանվանվել էր «Պետրոգրադի» և լի էր խորհրդածումներով ու հայրենասիրությամբ: Շուտով այցելեցի Մոսկվա և սկսեցի զբաղվել խմբագրությամբ այն թերթում, որի համար հոդվածներ էի գրում Հնդկաստանից: Այստեղ անցկացրեցի մոտ վեց ամիս, որի ընթացքում մի փոքր դրվագ տեղի ունեցավ. այն մի շարք իրադարձությունների հիմք էր դառնալու :

Մի օր, խմբագրությունում թերթի հաջորդ համարը պատրաստելիս, մի ծանոթագրություն նկատեցի (կարծեմ «Մոսկվայի Ձայնը» թերթում), որտեղ հղում էր կատարվում «Մոզերի պայքարը» բալետի սցենարին, որնք ինչպես թերթում էր ասվում, պատկանում էր ոմն «հնդիկի»: Բալետի գործողությունները տեղի էին ունենալու Հնդկաստանում և ամբողջությամբ պատկերելու էին Արևելքի մոգությունը՝ ներառյալ ֆակիրների հրաշագործությունները, հոգևոր պարերը, և այլն: Ինձ դուր չեկավ հոդվածի չափից ավելի ինքնավստահ ոճը, բայց քանի որ ազգությամբ հնդիկ բալետի սցենարի հեղինակները հազվադեպ էին Մոսկվայում, ես ներառեցի այս հոդվածը իմ թերթում՝ ավելացնելով, որ բալետում տեղ է գտել այն ամենը, ինչ հնարավոր չէ իրականում գտնել Հնդկաստանում, սակայն որի ետևից այնտեղ են մեկնում զբոսաշրջիկները:

Շուտով տարբեր պատճառներով ես հեռացա թերթից և ուղևորվեցի Պետերբուրգ:

Այնտեղ 1915թ-ի փետրվար և մարտ ամիսներին ես Հնդկաստան կատարած իմ ուղևորությունների վերաբերյալ դասախոսություններ կարդացի: Դասախոսությունների վերնագրերն էին «Հրաշալիքի որոնումները» և «Մահվան խնդիրները/հարցերը»: Այս

դասախոսություններում, որոնք կազմելու էին ճամփորդություններին մասին պատմող իմ գրքի նախաբանը, ես հայտնեցի, որ Հնդկաստանում հրաշալին այնտեղ չեն փնտրում, որտեղ հարկավոր է, որ բոլոր ընդունված ճանապարհները անիմաստ էին , և որ Հնդկաստանը ավելի խորն էր պահում իր գաղտնիքները, քան շատերը ենթադրում են: Մակայն այն, որ այնտեղ կար «հրաշալիքի» այնտեղ գտնվելն անկասկած էր. առկա էին բազմաթիվ նշաններ , որ ցուցանում էին այդ մասին, սակայն մարդիկ անցնում էին՝ չգիտակցելով դրանց թաքնված իմաստն ու խորհուրդը, կամ չիմանալով, թե ինչպես մոտենալ դրանց: Ես կրկին ի նկատի ունեի «դպրոցները»:

Չնայած պատերազմին, իմ դասախոսությունները մեծ հետաքրքրություն էին առաջացրել: Պետերբուրգի քաղաքային դումայի Ալեքսանդրովսկի սրահում յուրաքանչյուր դասախոսությանս ներկա էր ավելի քան հազար մարդ: Բազմաթիվ նամակներ էի ստանում, մարդիկ ինձ այցելության էին գալիս: Ես զգում էի, որ հիմնվելով «հրաշալիքի որոնումներ»-ի վրա հնարավոր էր համախմբել մեծ քանակությամբ մարդկանց, ովքեր կուշտ էին համընդհանուր խաբեության ձևերից և այլևս չէին ցանկանում ապրել այդ խաբեության մեջ:

Չատիկից հետո այցելեցի Մոսկվա, որպեսզի այնտեղ դասախոսություններ կարդամ: Այս դասախոսությունների ընթացքում հանդիպած մարդկանցից էին երկուսը, որոնցից մեկը երաժիշտ էր, իսկ մյուսը՝ քանդակագործ. նրանք շուտով սկսեցին ինձ պատմել մի խմբի մասին, որը զբաղվում էր մի շարք «խորհրդավոր» հետազոտություններով և փորձարկումներով և որի ղեկավարն էր ումն կովկասցի հույն՝ Գ.-ն: Ինչպես հասկացա, դա հենց այն «հնդիկն» էր, ում պատկանում էր բալետի սցենարը և որի մասին կարդացել էի թերթում երեք կամ չորս ամիս առաջ: Պետք է խոստովանեմ, որ այն, ինչ այս երկուսը պատմեցին խմբի վերաբերյալ և այն մասին, թե ինչեր էին տեղի ունենում այնտեղ, այսինքն՝ ամեն տեսակի մտածածին հրաշքներ, շատ քիչ հետաքրքրեցին ինձ: Նման հեքիաթներ ես նախկինում շատ էի լսել և դրանց վերաբերյալ արդեն կազմել էի որոշակի կարծիք:

Այսպիսով, կանայք, ովքեր հանկարծակի իրենց սենյակում տեսնում են օդում սավառնող «աչքեր», որոնք դուրսն են նրանց և որոնց կանայք հետևում են շրջելով փողոցից-փողոց և վերջապես հասնում են Արևելքի բնակչի տուն, որին և պատկանում են այդ աչքերը: Կամ մարդիկ, ովքեր հենց այդ նույն Արևելքի բնակչի ներկայությամբ զգում են, թե ինչպես է վերջինս իր հայացքով ներթափանցում նրանց մեջ և տեսնում նրանց բոլոր զգացմունքները, մտքերն ու ցանկությունները, հետո նրանք տարօրինակ զգացում են ունենում իրենց ոտքերում, ինչը թույլ չի տալիս նրանց շարժվել: Այնուհետև, զցելով իր ազդեցության տակ, այդ մարդը կարող է ստիպել նրանց անել այն ամենը, ինչ նա է ցանկանում՝ նույնիսկ հեռավորության վրա: Բոլոր այս և նմանատիպ պատմությունները ես միշտ համարել եմ անհաջող հորինվածք: Մարդիկ հրաշքներ են հնարում իրենք իրենց համար և հնարում են հենց այն, ինչ պահանջվում է իրենցից: Դա սնահավատության,

ներշնչանքի և թերի մտածելակերպի համակցություն է, և ինչպես նկատել եմ, այս պատմությունները երբևիցե հանդես չեն գալիս առանց նրանցում ներգրավված մարդկանց մասնակցության:

Նախկինում ունենալով նման փորձ՝ ես համաձայնեցի հանդիպել և գրուցել Գ.-ի ~~հետ~~ հետ միմիայն իմ նոր ծանոթ Մ.-ի համառ ջանքերի շնորհիվ:

Իմ առաջին հանդիպումից անմիջապես հետո ես լիովին փոխեցի իմ կարծիքը նրա մասին, ինչպես նաև նրանից իմ ունեցած սպասումները:

Այս հանդիպումը ես շատ լավ եմ հիշում: Մենք ժամանեցինք ադմկոտ, սակայն ոչ կենտրոնական փողոցում գտնվող մի փոքր սրճարան: Ես նկատեցի արևելյան արտաքինով մի մարդու, ով երիտասարդ չէր, ուներ սև բեղեր և խորաթափանց աչքեր: Նա ինձ շատ զարմացրեց, առաջին հերթին այն պատճառով, որ կարծես զգեստափոխված լիներ և բացարձակապես չէր համապատասխանում տեղայնքին և դրա մթնոլորտին:

Ես դեռևս ամբողջովին գտնվում էի Արևելքի տպավորության տակ, և հնդիկ ռաջի կամ արաբ շեյխի դիմագծերով այս մարդը, որին ես անմիջապես պատկերացրեցի սպիտակ բուռնուսով կամ ոսկեգոծ տուրբանով, նստած էր այս փոքրիկ սրճարանում, որտեղ հավաքվում էին մանր առևտրականներ և կոմիսիոն վաճառքի գործակալները: Սև վերարկուով, թավշյա օձիքով և սև կատելովով՝ նման վայրում նա տարօրինակ, անսպասելի և տագնապալի տպավորություն էր գործում, վատ զգեստափոխված մի մարդու տպավորություն, որի տեսքը քեզ ստիպում էր անհարմար զգալ, քանի որ գիտակցում էիր, որ նա իրականում այն չէր, ինչ ձևանում էր, սակայն դու պետք է խոսեիր և վարվեիր այնպես, կարծես ոչինչ չէիր նկատել: Նա ռուսերեն սխալ էր խոսում և ուներ շատ ընդգծված կովկասյան առողանություն. և այդ առողանությունը, որը կարելի էր կապել ցանկացած բանի ~~հետ~~, միայն ոչ փիլիսոփայական մտքերի հետ, ավելի էր սաստկացնում ինձ վրա գործած տպավորության տարօրինակությունը և անսպասելիությունը:

Ես չեմ հիշում, թե ինչպես սկսվեց մեր զրույցը, կարծեմ խոսեցինք Հնդկաստանից, Էդոթերիզմից և յոզայի դպրոցներից: Հասկացա, որ Գ.-ն շատ էր ճամփորդել և եղել էր այն վայրերում, որոնց մասին ես միայն լսել էի և ուր ես շատ կցանկանայի այցելել: Իմ հարցերը նրան բացարձակապես չէին շփոթեցնում, դեռ ավելին՝ նրա յուրաքանչյուր պատասխանն ավելի քան սպառիչ էր: Ինձ դուր էր գալիս նրա խոսելաոճը՝ շատ զգույշ և հստակ: Շուտով Մ.-ն հեռացավ: Գ.-ն պատմեց Մոսկվայում իրականացվող իր գործունեության մասին: Ես նրան լիովին չհասկացա: Նրա խոսքերից պարզ դարձավ, որ իր գործունեության մեջ, որը գլխավորապես հոգեբանական բնույթ ուներ, *քիմիան* մեծ դեր էր խաղում: Ունկնդրելով նրան առաջին անգամ՝ իհարկե ես նրա խոսքերը բառացիորեն ընկալեցի:

«Այն ինչի մասին դուք խոսում եք», - ասեցի ես, «ինձ հիշեցնում է հարավային Հնդկաստանում գտնվող մի դպրոցի մասին: Տրավենբորում ոմն բրահմին, որը բացառիկ մարդ էր տարբեր առումներով, մի երիտասարդ անզլիացու տեղեկացրել էր մի դպրոցի մասին, որն ուսումնասիրում էր

մարդկային օրգանիզմի քիմիան. գանազան հեղուկներ ներմուծելով և արտազատելով՝ կարելի էր փոխել անձի բարոյական և հոգեբանական բնույթը: Սա նման է նրան ինչի մասին, որ դուք եք խոսում» :

«Հնարավոր է», - ասեց Գ.-ն, «սակայն միևնույն ժամանակ դրանք կարող են բավականին տարբեր լինել: Գոյություն ունեն դպրոցներ, որոնք կարծես օգտագործում են միանման մեթոդներ, սակայն ընկալում են դրանք տարբեր ձևերով: Մեթոդների և նույնիսկ գաղափարների նմանությունը դեռ ոչինչ չի նշանակում»:

«Կա ևս մեկ հարց, որն ինձ չափազանց հետաքրքրում է», - ասեցի ես, «կան որոշ նյութեր, որոնք ընդունում են յոգերը՝ որոշակի վիճակի հասնելու համար: Արդյո՞ք դրանք որոշ դեպքերում թմրանյութեր չեն: Ես ինքս մի շարք փորձարկումներ եմ անցկացրել այս ուղղությամբ, և այն ամենը ինչ կարդացել եմ մոզոնի մասին ապացուցում է, որ բոլոր դպրոցները, բոլոր ժամանակաշրջաններում լայնորեն կիրառել են թմրանյութեր՝ նման վիճակներ ստեղծելու նպատակով, ինչը և հնարավոր էր դարձնում «մոզոնները»:

«Այո», - ասեց Գ.-ն, «շատ դեպքերում տվյալ նյութերը «թմրանյութեր» են: Բայց դրանք կարող են միանգամայն տարբեր կիրառումներ ունենալ: Կան դպրոցներ, որոնք ճիշտ են կիրառում թմրանյութերը: Մարդիկ այս դպրոցներում օգտագործում են դրանք ինքներն իրենց ուսումնասիրելու, ապագան տեսնելու, իրենց հնարավորությունները ավելի լավ գնահատելու, նախօրոք, «նախապես» հեռուն տեսնելու նպատակով, հասկանալու համար, թե ինչ կարելի է ձեռքբերել երկարատև աշխատանքի արդյունքում: Երբ մարդը տեսնում և համոզվում է, որ այն ամենը ինչ նա սովորել է տեսականորեն իրականում գոյություն ունի, նա սկսում է գիտակցաբար աշխատել, նա է գիտի, թե ինչ ուղղությամբ է շարժվում: Երբեմն դա ամենադժվարին ուղին է, որի միջոցով մարդը կարող է համոզվել այն հնարավորությունների գոյության մասին, որը նա հաճախ տեսնում է իր մեջ: Մրա հետ կապված հատուկ քիմիա գոյություն ունի. յուրաքանչյուր գործունեության համար կան որոշակի նյութեր, և յուրաքանչյուր գործունեություն կարելի է ուժգնացնել կամ թուլացնել, զարթնեցնել կամ քնացնել: Սակայն դա իրականացնելու համար անհրաժեշտ են խորը գիտելիքներ մարդու օրգանիզմի և այս առանձնահատուկ քիմիայի բնագավառում: Բոլոր դպրոցներում, որոնք օգտվում են այս մեթոդից, փորձարկումները իրականացվում են միայն անհրաժեշտության դեպքում և միմիայն փորձառու և իրազեկ մարդկանց հսկողությամբ, ովքեր կարող են կանխատեսել բոլոր արդյունքները և միջոցներ ձեռնարկել հնարավոր անցանկալի հետևանքների դեպքում: Այս դպրոցներում օգտագործվող նյութերը պարզապես «թմրանյութեր» չեն, ինչպես դուք եք ես դրանց կոչում, չնայած, որ դրանցից շատերը պատրաստվում են այնպիսի թմրամիջոցներից, ինչպիսիք են օպիումը, հաշիշը և այլն: Բացի այդ դպրոցներից, որտեղ նման փորձարկումներ են կատարվում, կան նաև այլ դպրոցներ, որոնք օգտագործում են այս և նմանատիպ միջոցներ՝ ոչ թե փորձարկումների կամ ուսումնասիրությունների նպատակով, այլ որոշակի

ցանկալի արդյունքներ ստանալու նպատակով, նույնիսկ կարճատև ժամանակամիջոցով: Նման միջոցների կիրառման արդյունքում մարդը կարող է որոշ ժամանակով չափազանց խելացի կամ ուժեղ դառնալ: Իհարկե ավելի ուշ նա կամ մահանում է, կամ խենթանում, սակայն դա կարևոր չէ: Գոյություն ունեն նաև այդֆայիսի դպրոցներ: Հետևաբար պետք է մեծ զգուշությամբ խոսել դպրոցների ց մասին: Վերջիններս կարող են միևնույն գործունեությամբ զբաղվել, բայց ստանալ բոլորովին տարբեր արդյունքներ»:

Ինձ շատ էր հետաքրքրում այն ամենը, ինչ Գ.-ն պատմում էր: Ի տարբերություն նախկինում ինձ հանդիպած մարդկանց՝ ես նրա խոսքերում նոր տեսանկետներ էի տեսնում:

Նա հրավիրեց ինձ ուղեկցել իրեն մի տուն, որտեղ հավաքվելու էին նրա աշակերտներից մի քանիսը:

Մենք կառք նստեցինք և ուղևորվեցինք դեպի Սոկոլնիկի:

Ճանապարհին Գ.-ն պատմեց ինձ, թե ինչպես էր պատերազմն ընդհատել նրա ծրագրերը: Նրա աշակերտներից շատերը հեռացել էին առաջին զինահավաքի ժամանակ, կորել էին բազմաթիվ թանկարժեք սարքավորումներ, որ պատվիրել էր արտասահմանից: Այնուհետև նա խոսեց իր աշխատանքի հետ կապված մեծ ծախսերից, ինչպես նաև վարձակալած թանկ բնակարաններից, ուր մենք այժմ ուղևորվում էինք: Այնուհետև նա հայտնեց, որ իր գործունեությունը հետաքրքրում էր Մոսկվայի մի շարք հայտնի մարդկանց՝ «պրոֆեսորների» և «արվեստագետների», ինչպես արտահայտվեց նա: Բայց երբ հարցրեցի, թե կոնկրետ ովքեր էին, նա նույնիսկ մեկ հոգու անուն չտվեց: «Հարցնում եմ, քանի որ բնիկ մոսկվացի եմ. բացի այդ՝ ես այստեղ թերթերի հետ տասը տարի է աշխատել եմ և քիչ, թե շատ ճանաչում եմ բոլորին», ասեցի նրան:

Գ.-ն ոչինչ չպատասխանեց:

Մենք մտանք մի մեծ դատարկ բնակարան, որը գտնվում էր քաղաքային դպրոցի վերնի մասում և, ինչպես երևում է, պատկանում էր դպրոցի ուսուցիչներին: Կարծում եմ, այն եկել էր փոխարինելու նախկին ~~Կարմիր~~ Կարմիր Լիճը:

Բնակարանում ներկա էին Գ.-ի ուսանողներից մի քանիսը՝ երեք կամ չորս երիտասարդ և երկու օրիորդ, որոնցից երկուսն էլ նման էին դպրոցի տնօրենների: Նման բնակարանում ես եղել էի: Նույնիսկ կահույքի բացակայությունն էր փարատում իմ կասկածը, քանի որ քաղաքային տնօրեններին կահույքով չէին ապահովում: Նման մտքից հետո տարօրինակ էր նայել Գ.-ին: Ինչո՞ւ էր նա ինձ պատմում այդ բնակարանի հետ կապված մեծ ծախսերից մասին: Առաջինը՝ բնակարանը նրան չէր պատկանում, երկրորդը՝ այն վարձակալություն չէր պահանջում, և երրորդը՝ այն չէր արժենա ավելի քան ամսական տասը ֆունտ: Այս ակնհայտ խաբեությունը այնքան արտասովոր թվաց ինձ, որ ես ենթադրեցի, թե այն պետք է որ ինչ-որ բան նշանակի:

Ես դժվարանում եմ վերականգնել Գ.-ի աշակերտների հետ իմ ունեցած զրույցի մասին հիշողությունները: Որոշ բաներ ինձ զարմացրեցին: Ես փորձեցի պարզել, թե ինչու՞մն է կայանում նրանց աշխատանքը, բայց

նրանք ինձ ուղղակի որևէ պատասխան չտվեցին՝ որոշ դեպքերում համառորեն օգտագործելով տարօրինակ և ինձ համար անհասկանալի տերմինաբանություն:

Նրանք առաջարկեցին կարդալ Գ.-ի աշակերտներից մեկի կողմից գրված պատմվածքի սկիզբը, որի հեղինակը Մոսկվայում չէր այդ ժամանակ:

Բնականաբար ես համաձայնեցի: Նրանցից մեկը սկսեց ձեռագրից քարձրածայն մի հատված կարդալ: Հեղինակը նկարագրում էր Գ.-ի հետ իր հանդիպումը և ծանոթությունը: Իմ ուշադրությունը գրավեց այն փաստը, որ պատմվածքը սկսվում էր հենց այն «Մոզերի պայքարը» բալետի ծանոթագրությունից, որի մասին ձեռագրի հեղինակը նույնպես ինչ-որ տեղ կարդացել էր և, որը ես տեսել էի ձմռանը «Մոսկվայի ձայնը» թերթում: Այնուհետև (սա ինձ շատ գոհացրեց, քանի որ ես ակնկալում էի այն) իր առաջին հանդիպմանը հեղինակը նկատել էր, որ Գ.-ն ասես տեղադրել էր նրան իր ձեռքի ափի մեջ, կշռել և ետ դրել իր տեղը: Պատմվածքի վերնագիրն էր «Ճշմարտության առկայծումները» և ակնհայտորեն գրված էր մի մարդու կողմից, ով չուներ գրական փորձ: Այնուամենայնիվ, այն տպավորիչ էր, քանի որ պարունակում էր մի համակարգի վերաբերյալ ցուցումներ, որն ինձ շատ էր հետաքրքրում, սակայն որին ես ոչ անուն կարող էի տալ, ոչ էլ ձևակերպում: Բացի այդ արվեստի այնտեղ կային մասին շատ տարօրինակ և անսպասելի մտքեր, որոնք ինձ մոտ մեծ արձագանք առաջացրեցին:

Ես ավելի ուշ հայտնաբերեցի, որ պատմվածքի հեղինակը մտացածին էր, որ պատմվածքը սկսել էին գրել ընթերցանությանը ներկա գտնվող Գ.-ի երկու աշակերտներ, որոնց նպատակն էր հեղինակի մտքերին գրական ոճ հաղորդել: Իսկ ավելի ուշ հայտնաբերեցի, որ պատմվածքի մտահաղացումը հենց իրեն՝ Գ.-ին էր պատկանում:

Այս պահին առաջին գլխի ընթերցանությունը ավարտվեց: Գ.-ն ողջ ընթացքում ուշադիր ունկնդրում էր: Նա նստել էր բազմոցին ծաված ոտքի վրա, և սև սուրճ էր ըմպում, ծխում էր և երբեմն հայացքը զցում ինձ վրա: Ինձ դուր էին գալիս նրա շարժումները, որոնք նման էին կատվի շարժումների նրբագեղությամբ և վստահությամբ: Նույնիսկ նրա լռության մեջ կար մի բան, որն առանձնացնում էր նրան մյուսներից: Ես կցանկանայի նրան հանդիպած լինել ոչ թե Մոսկվայում, ոչ թե այս բնակարանում, այլ այն վայրերից մեկում, որտեղից ես վերջերս վերադարձել էի՝ Քաիրոյի մսկիթների սրահներից մեկում, Ցեյլոնի ավիրված քաղաքներից մեկում, կամ հարավային Հնդկաստանի տաճարներից մեկում՝ Թանջորում, Տրիչինապոլում կամ Մադուրում:

<Լավ, ի՞նչ կարծիքի եք պատմվածքի վերաբերյալ>, - հարցրեց Գ.-ն կարճատև դադարից հետո, երբ ընթերցանությունն ավարտվեց:

Ես նրան հայտնեցի, որ հետաքրքիր էր ունկնդրել, բայց իմ կարծիքով այն թերություններ ունեւ, քանի որ պարզ չէր, թե ընդհանրապես ինչի մասին էր խոսքը: Պատմվածքում խոսքն այն ուժգին տպավորությունների մասին էր, որ ինչ-որ ուսմունք գործել էր հեղինակի վրա, սակայն այդ ուսմունքի մասին պատշաճ գաղափար կազմելու հնարավորություն չէր

տրվում: Ներկա գտնվողները սկսեցի բանավիճել ինձ հետ՝ մատնանշելով, որ ես պատմվածքի ամենակարևոր մասը բաց եմ թողել: Ինքը Գ.-ն ոչինչ չասեց:

Երբ հարցրեցի, թե ինչ համակարգ են ուսումնասիրում և որոնք էին դրա տարբերակիչ առանձնահատկությունները, ստացա շատ անորոշ պատասխան: Այնուհետև նրանք խոսեցին «ինքդ քեզ վրա աշխատելու» մասին, սակայն չկարողացան բացատրել, թե կոնկրետ ինչպես է պետք աշխատել: Ընդհանուր առմամբ իմ գրույցը Գ.-ի աշակերտների հետ այնքան էլ լավ չընթացավ. կարծես ինչ-որ բան հաշվարկված և արհեստական էր, թվում էր, թե նրանք ինչ-որ նախօրոք պատրաստված դեր էին խաղում: Բացի այդ, աշակերտները չէին համապատասխանում ուսուցչին: Նրանք պատկանում էին Մոսկվայի բավականին աղքատ մտավորականությանը՝ որոշակի շերտի, որին ես շատ լավ ծանոթ էի և որևէ հետաքրքիր բան չէի ակնկալում նրանցից: Ես նույնիսկ մտածեցի, որ շատ տարօրինակ էր հանդիպել նրանց հրաշալիքի որոնումների ճանապարհին: Միննույն ժամանակ նրանք բոլորն էլ ինձ վրա շատ հաճելի և բարեկիրթ մարդկանց տպավորություն գործեցին: Մ.-ի պատմած պատմությունների սկզբնաղբյուրը նրանք չէին, և նրանց չէին վերաբերում:

«Մի հարց կցանկանայի տալ ձեզ», - ասեց Գ.-ն դադարից հետո: «Հնարավոր է արդյոք տպագրել այս հոդվածը թերթում: Մենք կարծում ենք, որ դա հանրությանը մեր գաղափարներին ծանոթացնելու լավ միջոց է»:

«Դա անհնար է», - ասեցի ես: «Մա հոդված չէ՝ չունի ոչ սկիզբ, ոչ վերջ. այն պատմության սկիզբ է և չափազանց երկար է թերթի համար: Հասկանում եք, մենք նյութը չափում ենք տողերով: Ընթերցանությունը տևեց երկու ժամ, հետևաբար կկազմի մոտավորապես երեք հազար տող: Գիտե՞ք, թե ինչն ենք մենք կոչում թերթում՝ ֆելիետոն. հասարակ ֆելիետոնը բաղկացած է երեք հարյուր տողից: Դա նշանակում է, որ այս պատմության սկիզբը կպահանջի տասը ֆելիետոն: Մոսկվայում Ֆելիետոնը, որը ունի շարունակություն, տպագրվում է ընդամենը շաբաթը մեկ անգամ, և այս դեպքում կպահանջվի տասը շաբաթ, իսկ սա մեկ գիշերվա գրույց է: Այն հնարավոր կլինի հրատարակել միայն ամսագրում, բայց ներկայումս չգիտեմ նույնիսկ, թե դրանցից որ մեկը ամենահարմարը կլինի: Նույնիսկ այս դեպքում նրանք կպահանջեն ողջ պատմությունը, մինչև համաձայնելը:»

Գ.-ն ոչինչ չասեց և գրույցն այստեղ կանգ առավ:

Սակայն Գ.-ի անձի մեջ ես միանգամից ինչ-որ արտասովոր բան նկատեցի, և երեկոյի ընթացքում այդ տպավորությունը միայն ուժգնացավ: Երբ ես հեռանում էի, գլխումս մի միտք փայլատակեց՝ ես *անմիջապես, առանց հասպտեղելու* պետք է ևս մեկ հանդիպում կազմակերպեի նրա հետ, այլապես կկորցնեի նրա հետ ստեղծած կապը: Ես հարցրեցի արդյոք կարող էի հանդիպել նրան կրկին մինչև Պետերբուրգ մեկնելը: Նա ասեց, որ հաջորդ օրը նույն ժամին լինելու էր նույն սրճարանում:

Ես դուրս եկա երտասարդ տղաներց մեկի հետ: Շատ տարօրինակ զգացում էր պատել ինձ. այս երկար ընթերցանությունը, որը ես գրեթե չհասկացա, մարդիկ, որոնք պատասխան չտվեցին իմ հարցերին, ինքը Գ.-ն՝

իր տարօրինակ պահվածքով և իր մարդկանց վրա ունեցած ազդեցությամբ: Այս ամենը անընդմեջ ծիծաղելու, բղավելու, երգելու անսպասելի ցանկություն էր առաջացնում. կարծես դպրոցից կամ տարօրինակ կալանքից ~~տակից~~ փախած լինեի:

Ցանկանում էի տպավորություններիս մասին պատմել այս երիտասարդ տղային, կատակել Գ.-ի և այս բավականին ձանձրալի պատմության վերաբերյալ: Անմիջապես պատկերացրեցի, թե ինչպես եմ պատմում այս ամենը իմ ընկերներին: Բարեբախտաբար ես ժամանակին կանգ առա. «Ախր նա անմիջապես կգնա և կզանգահարի բոլորին: Չէ որ նրանք բոլորն ընկերներ են»:

Այսպիսով, փորձեցի զսպել ինձ. լուռ մոտեցանք տրամվային և ուղևորվեցինք դեպի Մոսկվայի կենտրոն: Բավականին երկար ուղևորությունից հետո մենք ժամանեցինք Օխոտնի Նադ, որի մոտակայքում էի կանգ առել: Մեկս մյուսին լուռ հրաժեշտ տվեցինք և բաժանվեցինք այստեղ:

Հաջորդ օրը ես նույն սրճարանում էի, որտեղ հանդիպել էի Գ.-ին, դրան հաջորդող օրը նույնպես, և այդպես ամեն օր: Մոսկվայում անկացրած մեկ շաբաթվա ընթացքում ես ամեն օր տեսության էի գնում Գ.-ին: Շուտով ինձ պարզ դարձավ, որ նա գիտի մեծ մասամբ այն ամենը, ինչը որ ես էի ցանկանում իմանալ: Մի շաբթ այլ պատմությունների հետ մեկտեղ նա ինձ բացատրեց որոշ երևույթներ, որոնց ես ականատես էի եղել Հնդկաստանում, բայց որոնց բացատրությունը ոչ ոք չէր կարողացել ինձ տալ, ոչ այդ պահին, ոչ էլ հետո: Նրա բացատրություններում կար մասնագիտական վստահություն, փաստերի ճշգրիտ վերլուծություն և մի *համակարգ*, որը ես դեռևս չէի ընկալել, բայցի որի առկայությունը ես զգացել էի, քանի որ Գ.-ի բացատրությունները ստիպում էին ինձ ոչ միայն մտածել քննարկվող փաստերի մասին, այլ նաև շատ այլ բաների մասին, որոնք ես դիտարկել էի կամ որոնց մասին ես ենթադրություններ էի կատարել:

Գ.-ի խմբի հետ ես այլևս չհանդիպեցի: Իր մասին Գ.-ն քիչ էր պատմում: Մեկ կամ երկու անգամ նա հիշատակեց իր՝ արևելք կատարած ճամփորդությունները: Ինձ հետաքրքրում էր, թե կոնկրետ որտող էր եղել նա, սակայն այդպես էլ չկարողացա պարզել դա:

Մոսկվայում իրականացվող իր աշխատանքի մասին Գ.-ն պատմեց, որ ուներ երկու առաձին՝ մեկը մյուսի հետ կապ չունեցող խմբակ, որ զբաղվում էին տարբեր աշխատանքներով, ինչպես նա արտահայտվեց, «իրենց պատրաստվածության և ունակություններին» համապատասխան: Այս խմբերի յուրաքանչյուր անդամ տարեկան հազար ռուբլի էր վճարում և հնարավորություն էր ձեռք բերում իր առօրյա գործունեությանը զուգահեռ աշխատելու Գ.-ի հետ:

Ես նշեցի, որ իմ կարծիքով տարեկան հազար ռուբլին մեծ գումար էր սեփական միջոցներ չունեցող մարդկանց համար:

Գ.-ն պատասխանեց, որ այլ կերպ հնարավոր չէր, քանի որ հենց աշխատանքի բնույթի պատճառով նա չէր կարող բազմաթիվ աշակերտներ ունենալ: Միևնույն ժամանակ նա չէր ցանկանում և *պարտավոր չէր* (նա

ընդգծեց դա) իր անձնական դրամը տրամադրել աշխատանքի կազմակերպմանը: Նրա աշխատանքը չէր կարող բարեգործական բնույթ կրել, և նրա աշակերտները իրենք պետք է միջոցներ հայթաթեին բնակարաններ վարձելու համար, որտեղ կկարողանային հավաքվել, փորձարկումներ կատարել և այլն: Բացի այդ, նա ավելացրեց, որ փորձը ցույց էր տվել, որ կյանքում թույլ մարդիկ, թույլ էին նաև աշխատանքում:

«Այս միտքն է ունի մի քանի տեսակետ», - ասաց Գ.-ն: «Յուրաքանչյուր մարդու աշխատանք կարող է պահանջել ծախսեր, ճամփորդություններ, և այլն: Եթե նրա կյանքն այնքան վատ է կազմակերպված, որ հազար ռուբլին նրա համար կարող է խնդիր առաջացնել, ապա ավելի լավ կլինի, որ նա չգրադվի այս աշխատանքով: Ենթադրեք տարվա ընթացքում աշխատանքի բերումով նա պետք է մեկնի Կահիրե կամ մեկ այլ տեղ: Հետևաբար նա պետք է բավարար միջոցներ ունենա: Մեր այս պահանջի շնորհիվ մենք կարողանում ենք իմանալ արդյոք նա կարող է աշխատել մեզ հետ, թե ոչ»:

«Բացի այդ», - Գ.-ն շարունակեց, «իմ ժամանակը չափազանց ~~շատ~~ սուղ է, որպեսզի գոհաբերեմ այն ուրիշների համար՝ առանց վստահ լինելու, որ դա նրանց օգտակար կլինի: Ես շատ եմ գնահատում իմ ժամանակը, քանի որ այն ինձ պետք է իմ աշխատանքի համար և, ինչպես արդեն ասեցի, չեմ կարող և չեմ ցանկանում անարդյունավետ կերպով վատնել այն: Կա ևս մեկ պատճառ», - ասաց Գ.-ն, «մարդիկ չեն գնահատում այն, ինչի համար չեն վճարում»:

Այս ամենը տարօրինակ զգացումով էի ունկնդրում: Մի կողմից ինձ գոհացնում էր այն ամենը ինչ ասում էր Գ.-ն. գրավիչ էր սենտիմենտալության տարրերի բացակայությունը նրա խոսքում, բոլորի կողմից ընդունված «ալտրուիզմի» մասին զրույցները, այնպիսի խոսքերի բացակայությունը, ինչպիսիք են «աշխատանք մարդկության բարօրության համար» և այլն: Մյուս կողմից ինձ զարմացնում էր Գ.-ի ակնհայտ ցանկությունը համոզել ինձ գումարային հարցին առնչվող ինչ-որ բան, *եղբ ինձ համոզելու կարիք չկար*:

Եթե կար մի բան, որին ես համաձայն չէի, ապա դա պարզապես այն հարցն էր՝ արդյոք Գ.-ն կարող էր բավարար գումար հավաքել, այնպես ինչպես նա էր նկարագրում: Ես գիտակցում էի, որ իմ տեսած աշակերտներից և ոչ մեկը չէր կարող վճարել տարեկան հազար ռուբլի: Եթե նա արևելքում գտել էր թաքնված գիտելիքների տեսանելի և շոշափելի հետքերը և այս ուղղությամբ շարունակում էր կատարել իր հետազոտությունները, ապա ակնհայտ էր դառնում, որ նրան անհրաժեշտ կլինեին ֆինանսական միջոցներ, ինչպես ցանկացած այլ գիտական նախաձեռնության համար, ինչպես օրինակ՝ աշխարհի անհայտ մի անկյուն արշավով ուղևորվելու, հնագույն քաղաքի պեղումներն անցկացնելու, ինչպես նաև բազմաթիվ ֆիզիկական կամ քիմիական փորձարկումներ պահանջող ուսումնասիրություններ իրականացնելու համար: Ինձ սրանում համոզելու կարիք չկար: Հակառակը՝ ես արդեն մտածել էի, որ, եթե Գ.-ն թույլ տար ինձ առավել հանգամանալից ծանոթանալ իր գործունեությանը, ապա ես միգուցե կկարողանայի հայթաթել անհրաժեշտ ֆինանսական

միջոցներ՝ հնարավորություն տալով նրան իր աշխատանքի համար ամուր հիմք ստեղծել և առավել պատրաստված մարդկանցով ապահովվել: Բայց իհարկե իմ պատկերացումները այս աշխատանքի վերաբերյալ դեռևս շատ մշուշոտ էին:

Ուղղակիորեն չասելով՝ Գ.-ն ինձ հասկացրեց, որ ինձ կընդունի որպես աշակերտ, եթե ես այդ մասին ցանկություն հայտնեմ: Նրան ասեցի, որ տվյալ պահին գլխավոր խոչընդոտն է ինձ համար այն էր, որ ես չէի կարող մնալ Մոսկվայում, քանի որ պայամանվորվածություն ունեի Պետերբուրգում մի հրատարակչի հետ և մի քանի գիրք էի պատրաստել հրապարակման համար: Գ.-ն ինձ հայտնեց, որ երբեմն այցելում էր Պետերբուրգ՝ խոստանալով շուտով այցելել, ինչի մասին ինձ տեղյակ կպահեր:

<Բայց, եթե ես միանամ ձեր խմբին, ապա դա ինձ համար մեծ խնդիր կարող է առաջացնել: Ես չգիտեմ արդյոք դուք ձեր ուսանողներից պահանջում եք գաղտնի պահել ձեր սովորացրածը, թե ոչ, քանի որ ես նման խոստում պատրաստ չեմ տալ: Իմ կյանքում երկու անգամ եմ նման հնարավորություն ունեցել միանալու խմբերի, որոնք զբաղվում էին նմանատիպ գործունեությամբ, որոնցով ես շատ էի հետաքրքրված ժամանակին: Սակայն երկու դեպքում էլ, միանալով նրանց, ես պետք է համաձայնեի կամ խոստում տայի գաղտնի պահել այն ամենը ինչ կսովորեի այնտեղ: Երկու դեպքերում էլ հրաժարվեցի, քանի որ, առաջին հերթին, ես գրող էի և ցանկանում էի բացարձակապես ազատ լինել և ինքս որոշել, թե ինչ կարող եմ կգրել, իսկ ինչ՝ ոչ: Եթե ես խոստանամ գաղտնի պահել այն, ինչ ինձ ասում են, ապա դժվար կլինի հետագայում տարանջատել այն ինչ ինձ ասվել էր իմ սեփական մտքերից, որոնք կարող են կապված լինել կամ նույնիսկ կապված չլինել ասվածի հետ: Օրինակ՝ ես շատ այնքան էլ ծանոթ չեմ ձեր գաղափարներին, սակայն գիտեմ, որ երբ սկսենք գրուցել, ապա շուտով անպայման կանդրադառնանք ժամանակի և տարածության, առավել բարձր չափումների հետ կապված խնդիրներին: Կան խնդիրներ, որոնց վրա ես արդեն երկար տարիներ աշխատել եմ: Ես չեմ կասկածում, որ դրանք մեծ տեղ են գրավում ձեր համակարգում>: Գ.-ն գլխով արեց: <Այսպիսով, եթե մենք այժմ գաղտնիության երդման տակ ունենայինք այս գրույցը, ապա ես չէի իմանա մեր առաջին գրույցից հետո ինչ կարող էի գրել և ինչ չէի կարող գրել>:

<Իսկ դուք ինքներդ ի՞նչ կարծիքի եք այդ կապակցությամբ >, - հարցրեց Գ.-ն: <Շատ խոսելն էլ ճիշտ չէ: Կան բաներ, որոնք ասվում են միայն հետևորդներին>:

<Ես նման պայմանի միայն ժամանակավոր կարող եմ համաձայնել>, - ասեցի ես: <Իհարկե զավեշտալի կլինեն, եթե միանգամից սկսեի գրել այն, ինչ ձեզնից եմ սովորել: Բայց, եթե դուք սկզբունքորեն նպատակ չունեք գաղտնի պահել ձեր գաղափարները և միայն մտահոգված եք, որ դրանք խեղաթյուրված տեսքով չներկայացվեն, ապա կարող եմ ընդունել նման պայմանը և սպասել այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է՝ առավել խորությամբ ձեր ուսմունքը ընկալելու համար: Մի անգամ ես հանդիպեցի

մի խումբ մարդկանց, ովքեր զբաղվում էին բազմաբնույթ գիտական փորձարկումներով: Նրանք իրենց աշխատանքը գաղտնի չէին պահում: Բայց նրանց պայամանն էր, որ ոչ ոք չպետք է քննարկեր կամ նկարագրեր փորձարկումը, մինչև ինքը չկարողար իրականացնել այն: Մինչև տվյալ անձը չկարողանար ինքնուրույն կրկնել փորձարկումը, նա իրավունք չուներ խոսելու այդ մասին»:

< Ավելի լավ ձևակերպում չէր էլ կարող լինել>, - ասեց Գ.-ն, <և, եթե դուք հետևեք նման կանոնի, այս խնդիրը երբևիցե չի առաջանա մեր միջև>:

<Որևէ պայման կա՞ ձեր խմբին միանալու համար>, - հարցրեցի ես: <Եվ ձեր խմբին միացող մարդը կապնվու՞մ է խմբի կամ ձեզ հետ: Այլ կերպ ասած՝ ցանկանում եմ իմանալ, արդյո՞ք նա ազատ է և կարող է հեռանալ ձեր գործունեությունից, թե պարտավորվում է ստանձնել որոշ պարտականություններ: Եվ ինչպե՞ս եք դուք վարվում տվյալ անձի հետ, եթե նա չի կատարում իր պարտականությունները>:

<Որևէ նման պայաման չկա>, - ասեց Գ.-ն, <և չի էլ կարող լինել: Մեր մեկնակետն այն է, որ մարդն ինքն իրեն չի ճանաչում, որ նա *գոյություն չունի* (նա շեշտեց այս բառերը), այսինքն՝ նա այն չէ ինչ կարող է լինել և ինչ պետք է լինի: Հենց այս պատճառով նա չի կարող որևէ համաձայնություն կնքել կամ որևէ պարտականություններ ստանձնել: Նա ապագայի հետ կապված որևէ որոշում չի կարող ընդունել: Այսօր նա մի մարդ է, վաղը՝ մեկ ուրիշ: Նա ոչ մի կերպ կապված չէ մեզ հետ և, եթե ուզում է, ապա ցանկացած պահի կարող է թողնել աշխատանքը և հեռանալ: Որևէ պարտավորություններ չկան ոչ մեր կողմից նրա հանդեպ, ոչ էլ նրա կողմից մեր հանդեպ>:

< Եթե ցանկանում է, ապա կարող է ուսանել մեզ մոտ: Նա ստիպված կլինի երկար ժամանակ սովորել և մեծ աշխատանք կատարել իր վրա: Երբ նա ձեռք կբերի բավարար գիտելիքներ, ապա դա արդեն մեկ այլ հարց է: Նա ինքը կհասկանա դուր է գալիս նրան արդյոք մեր աշխատանքը, թե ոչ: Եթե ցանկանում է, կարող է շարունակել աշխատել մեզ հետ, եթե ոչ՝ կարող է լքել մեզ: Մինչ այդ պահը նա ազատ է: Եթե դրանից հետո որոշի մնալ մեզ հետ, ապա կկարողանա որոշումներ կայացնել կամ ապագան ծրագրել>:

<Օրինակ՝ դիտարկենք հետևյալը. հնարավոր է ստեղծվի մի իրավիճակ, իհարկե ոչ սկզբում, այլ ավելի ուշ, երբ մարդը պետք է գաղտնի պահի այն, ինչ վերջերս սովորել է: Բայց կարո՞ղ է արդյոք նա, ով չի ճանաչում ինք իրեն, խոստանալ գաղտնիք պահել: Իհարկե կարող է խոստանալ, բայց կարող է արդյո՞ք պահել գաղտնիքը: Քանի որ նա մեկ մարդ չէ, նրանում կան տարբեր մարդիկ. *նրանցից մեկը խոստանում* և հավատում է, որ ցանկանում է պահպանել գաղտնիությունը: Սակայն հաջորդ օրը, *նրանցից մյուսը* կարող է պատմել գաղտնիքը իր կնոջը կամ ընկերոջը՝ մի բաժակ գինու շուրջ, կամ մի խելացի մարդ իր հարցումներով այնպես կարող է անել, որ նա առանց գիտակցելու պատի ամեն ինչ: Վերջապես, նրան կարող են հիպնոզի ենթարկել կամ վրան անսպասելիորեն բղավել և նա վախենալով անի այն ինչ ցանկանաս: Ինչպիսի՞ պարտականություն կառող է նա իր վրա վերցնել: Ոչ, նման

մարդու հետ մենք լուրջ չենք կարող խոսել: Որպեսզի մարդը կարողանա գաղտնիքը պահել նա պետք է *ճանաչի ինքն իրեն* և պետք է իր գոյը գիտակցի: Եվ այն մարդը ով նման է մնացած մարդկանց շատ հեռու է դրանից>:

<Երբեմն մենք ժամանակավոր պայամաններ ենք ստեղծում մարդկանց համար՝ նրանց փորձելու համար: Սովորաբար նրանք շատ արագ են տեղի տալիս, բայց մենք երբևիցե լուրջ գաղտնիքը չենք պատմում և այն մարդկանց, ում չենք վստահում, այնպես որ դա էական չէ: Նկատի ունեմ մեզ համար դա էական չէ, սակայն իհարկե սովյալ մարդու հետ մեր կապը խզվում է, և նա կորցնում է մեզնից որևէ բան սովորելու իր հնարավորությունը, եթե իհարկե որևէ բան կա մեզանից սովորելու: Դա կարող է նաև ազդեցություն ունենալ նրա բոլոր մտերիմ ընկերների վրա, չնայած հնարավոր է դա անսպասելի լինի նրանց համար>:

Հիշում եմ, որ Գ.-ի հետ առաջին զրույցներիցս մեկում մեր ծանոթության առաջին շաբաթվա ընթացքում ես ակնարկեցի, որ կրկին ցանկություն ունեմ այցելելու արևելքը:

<Արժե՞ մտածել դրա մասին: Արդյո՞ք ես կկարողանամ գտնել այնտեղ այն, ինչ փնտրում եմ>,- հարցրեցի Գ.-ին:

<Կարող եք գնալ այնտեղ հանգստանալու, արձակուրդի>,- ասեց Գ.-ն, <սակայն իմաստ չունի այնտեղ գնալ գտնելու համար այն, ինչ ցանկանում ես: Այդ ամենը կարող եք այստեղ գտնել>:

Ես հասկացա, որ խոսքը վերաբերվում էր այստեղ իր հետ աշխատելու մասին:

<Սակայն արդյո՞ք, այսպես կոչված տեղական դպրոցները, շրջապատված լինելով տարբեր տեսակի ավանդություններով, չեն ընձեռնում առավել մեծ հնարավորություններ>,- հարցրեցի ես:

Պատասխանելով այս հարցին՝ Գ.-ն մի քանի բան ասեց ինձ, որոնք ես հասկացա միայն որոշ ժամանակ անց:

<Նույնիսկ, եթե դու գտնես դպրոցներ, դրանք կլինեն <փիլիսոփայական> դպրոցներ>,- ասեց նա: Հնդկաստանում կան միայն <փիլիսոփայական> դպրոցներ: Նման բաժանում կատարվել է դեռ վաղուց. Հնդկաստանում <ֆիլիսոփայությունն էր>, Եգիպտոսում՝ <տեսությունը> և ներկայիս Պարսկաստանում, Մեզոպոտամիայում և Թուրքեստանում (Turkestan)՝ <գործնականը>:

<Այդպես է նույնիսկ ներկայումս>,- հարցրեցի ես:

<Մասամբ նույնիսկ ներկայումս>,- ասեց նա: <Բայց դու ամբողջությամբ չես հասկանում, թե ինչ նկատի ունեմ <փիլիսոփայություն>,- <տեսություն> և <պրակտիկա> ասելով: Այս բառերը պետք է համընդհանուր հասկացություններից մի փոքր այլ կերպ ընկալվեն: Սակայն, եթե խոսում ենք դպրոցներից՝ կան միայն *հատուկ* դպրոցներ, ընդհանուր բնույթի դպրոցներ չկան: Յուրաքանչյուր ուսուցիչ կամ, *գուրու*, մասնագիտացված է որևէ մեկ բնագավառում: Մեկը աստղագետ է, մյուսը՝ քանդակագործ, երրորդը՝ երաժիշտ: Եվ բոլոր աշակերտները պետք է ուսանեն այն

առարկան, որում տվյալ ուսուցիչն է մասնագիտացած , այնուհետև մեկ այլ առարկա և այդպես շարունակ: Անհրաժեշտ կլինեն հազար տարի՝ ամեն ինչը ~~ի մասին~~ սովորելու համար>:

<Իսկ դուք ինչպե՞ս եք սովորել>:

<Ես մենակ չեի: Մեր խումբը բաղկացած էր տարբեր բնագավառի ~~տեսակի~~ մասնագետներից: Յուրաքանչյուրը ուսանում էր իր առարկայի սահմաններում: Այնուհետև, երբ մենք հավաքվում էինք մենք համակցում էինք այն ամենը, ինչ բացահայտել էինք:

<Իսկ որտե՞ղ են ձեր կողակիցները հիմա>:

Որոշ ժամանակ Գ.-ն լուռ էր, այնուհետև, նայելով հեռուն, ասեց.

<Նրանցից ոմանք մահացել են, մյուսները աշխատում են կամ մեկուսացել են>:

Վանական բառապաշարին վերաբերվող այս բառը, որը ես այդքան անսպասելի լսեցի, ինձ շատ տարօրինակ և անհարմար զգացողություն պատճառեց:

Միևնույն ժամանակ ես զգացի, որ Գ.-ն ինչ-որ <դեր > է խաղում. կարծես ժամանակ առ ժամանակ միտումնավոր օգտագործում է բառեր, որոնք կարող են հետաքրքրել ինձ և ստիպել մտածել որոշակի ուղղությամբ:

Երբ ես նրան փորձեցի հարցնել, թե նա որտեղից է ձեռք բերել իր գիտելիքները և, թե որն է նրա գիտելիքների աղբյուրը և որքան խորունկ են դրանք, նա ինձ ուղիղ պատասխան չտվեց:

<Գիտես>, - ասեց Գ.-ն, <երբ Հնդկաստանում էի, թերթում մի հոդված էր տպագրվել ձեր ճամփորդության և նպատակների մասին: Ես իմ աշակերտներին հանձնարարեցի կարդալ ձեր գրքերը և դրանց հիման վրա որոշել, *թե դուք ով ես* և ինչ կկարողանայիք գտնել: Այնպես որ, մենք գիտեինք, թե դուք ինչ էիք գտնելու արդեն այն ժամանակ, երբ դուք դեռևս ճանապարհին էիք>:

Այսպես ~~համ~~ ավարտվեց մեր զրույցը:

Մի անգամ ես Գ.-ին հարցրեցի այն բալետից մասին, որի մասին հիշատակվել էր թերթերում և որի մասին հղում էր կատարվել <Ճշմարտության առկայծումները > պատմվածքում: Հարցրեցի նաև արդյոք այդ բալետը ուներ <միստիկ ներկայացման> բնույթ: <Իմ բալետը առեղծված չէ>,- ասեց Գ.-ն : <Մտահաղացում ունեի ստեղծել հետաքրքիր և գեղեցիկ բեմադրություն: Իհարկե արտաքին ձևի մեջ կա թաքնված իմաստ, սակայն իմ նպատակը չի եղել բացահայտել կամ շեշտադրել այդ իմաստը: Որոշ պարեր բալետում կարևոր տեղ են զբաղում: Ես համառոտ կերպով կբացատրեմ ձեզ այն: Պատկերացրեք, որ տիեզերական մարմինների, օրինակ՝ Արեգակնային համակարգի մոլորակների, շարժումների ուսումնասիրության մեջ կառուցվում է հատուկ մեխանիզմ այս շարժումների օրենքների տեսողական պատկերը ստեղծելու, ինչպես նաև մեզ նրանց մասին հիշեցնելու նպատակով: Այս մեխանիզմում յուրաքանչյուր մոլորակ ունի համապատասխան մեծության գունդ, որը գտնվում է Արևի կենտրոնական գնդից որոշ տարածության վրա:

Մեխանիզմը գործի է դրվում, և բոլոր գնդերը սկսում են պտտվել և շարժվել իրենց վերագրված ճանապարհով՝ տեսանելի կերպով վերարտադրելով այն օրենքները, որոնցով ղեկավարվում են Արեգակնային համակարգի մոլորակները: Այս մեխանիզմը հիշեցնում է քեֆ այն ամենը, ինչ հայտնի է Արեգակնային համակարգի մասին: Նման բան առկա է նաև որոշ պարերի ռիթմում: Պարողների որոշակի շարժումներում և դրանց կոմբինացիաներում տեսողական վերարտադրվում են որոշ օրենքներ, որոնք հասկանալի են այն մարդկանց, ովքեր գիտեն դրանց մասին: Նման պարերը կոչվում են հոգևոր պարեր: Արևելքով ճանապարհորդելիս՝ ես բազմիցս ականատես եմ եղել, թե ինչպես են այդ պարերը կատարվում հին տաճարներում մատուցվող պատարագների ժամանակ: Այս պարերից մի քանիսը ներկայացված են <Մոզերի Պայքարը> բալետում: Դեռ ավելին՝ այդ բալետի հիմքում ընկած են երեք գաղափարները: Սակայն, եթե ես ներկայացնեմ բալետը շարքային բեմի վրա, հանդիսատեսը երբեք չի հասկանա այդ գաղափարները>:

Նրա հետագա խոսքերից ես հասկացա, որ դա բառի բուն իմաստով բալետ չի, այլ մի շարք դրամատիկ և մնջախաղային տեսարանների համակցություն է, որը կառուցված է մեկ թեմայի շուրջ և ուղեկցվում է երաժշտությամբ, երգերով ու պարերով: Այս տեսարանների համար ամենապատշաճ անվանումը կլինեի <դրամատիկական տեսություն>, սակայն գերծ որևէ կոմիկական տարրից: <Բալետը> կամ <դրամատիկական տեսությունը> ստանալու էր <Մոզերի Պայքարը> անվանումը: Կարևոր տեսարաններում ներկայացված էին <Սև Մոզի> և <Սպիտակ Մոզի> դպրոցները, այդ երկու դպրոցները ներկայացնող աշակերտների վարժությունները և այդ երկու դպրոցների միջև ընթացող պայքարը: Գործողությունը տեղի էր ունենում արևելյան քաղաքի կյանքի ֆոնի վրա, որտեղ միախառնված էին հոգևոր պարերը, դերվիշների պարերը և տարբեր այլ արևելյան ազգային պարեր. այս ամենին միաձուլվում է սիրո պատմություն, որն է ինքնին պարունակում էր այլաբանական իմաստ:

Ինձ հատկապես հետաքրքրեց այն, որ *միևնույն* կատարողները ելույթ էին ունենալու ինչպես <Սպիտակ Մոզի> դերում, այնպես էլ <Սև Մոզի> դերում. կատարողները ինքները և նրանց շարժումները պետք է հմայիչ և գեղեցիկ լինեին առաջին գործողության մեջ, իսկ երկրորդում՝ տգեղ և աններդաշնակ:

<Հասկանում եք, որ այս կերպ նրանք կճանաչեն և կուսումնասիրեն իրենց բոլոր կողմերը. հետևաբար բալետը մեծ կարևորություն ունի ինքնաճանաչման հարցում>,- ասեց Գ.-ն:

Այդ պահին ինձ համար ամենինչ շատ պարզ էր, բայց ինչ-որ հակասություն կար, որ ինձ ապշեցնում էր:

<Թերթի հայտարարությունում ասվում էր, որ Ձեր <բալետը> բեմականացվելու է Մոսկվայում և որ դրանում մասնակցելու են որոշ ճանաչված բալետի պարողներ: Ինչպե՞ս էք դուք սա համատեղում ինքնաճանաչման գաղափարի հետ>,- հարցրեցի ես: <Նրանց խաղի և պարի նպատակը ինքնաճանաչումը չի կարող լինել>:

<Այս ամենը դեռևս որոշված չէ>,- ասաց Գ.-ն: <Իսկ թերթի հայտարարության հեղինակը լիովին տեղեկացված չէր: Այս ամենը կարող է այլ կերպ դասավորվել: Չնայած մյուս կողմից՝ բալետի մասնակիցներն ինքներն կտեսնեն արդյոք իրենց դուր է գալիս այն, թե ոչ>:

<Իսկ Ո՞վ է գրում երաժշտությունը>,- հարցրեցի ես:

<Դա ևս որոշված չէ>,- ասեց Գ.-ն: Նա այլևս ոչինչ չասեց, իսկ <բալետի> մասին ես կրկին լսեցի հինգ տարի անց:

Մի անգամ ես գրուցում էի Գ.-ի հետ Մոսկվայում: Պատմում էի նրան Լոնդոնից, որտեղ եղել էի կարճ ժամանակ առաջ, եվրոպական քաղաքներում զարգացող սարսափագրու մեքենայացումից, առանց որի երևի թե հնարավոր չլիներ ապրել և աշխատել այդ <մեքենայացված խաղալիքների> խելահեղ միջավայրում:

<Մարդիկ վերածվում են մեքենաների>,- ասեցի ես: <Անկասկած, երբեմն նրանք վերածվում են կատարյալ մեքենաների: Սակայն ես վստահ եմ, որ նրանք չեն կարող մտածել: Եթե նրանք փորձեին մտածել, ապա այդքան կատարյալ մեքենաներ չէին կարող լինել>:

<Այո>,- ասեց Գ.-ն, <ճիշտ է, սակայն միայն մասամբ: Ամեն ինչ կախված է նրանից, թե իրենց աշխատանքի ժամանակ մարդիկ *որ* մտավոր ուժից են օգտվում: Եթե նրանք օգտագործեն համապատասխան մտավոր ուժը, ապա հնարավոր է ավելի լավ կարողանան մտածել նույնիսկ մեքենաների հետ աշխատելիս: Սակայն կրկնում եմ, միայն իրենց համապատասխան մտավոր ուժը օգտագործելու դեպքում է դա հնարավոր >:

Ես չհասկացա, թե Գ.-ն ինչ նկատի ուներ <համապատասխան մտավոր ուժ> ասելով. ես հասկացա դա միայն շատ ավելի ուշ:

<Երկրորդը>,- շարունակեց նա, <մեքենայացումը, որի մասին դուք խոսում բացարձակապես վտանգավոր չէ: Մարդը կարող է *մարդ* մնալ (նա շեշտեց այս բառը) նույնիսկ մեքենաների հետ աշխատելիս: Գոյություն ունի մեկ այլ մեքենայացում, որը շատ ավելի վտանգավոր է. եթե դու ինքդ ես մեքենա դառնում: Երբևիցե մտածե՞լ եք այն մասին, որ բոլոր մարդիկ ինքնին մեքենաներ են>:

<Այո>,- պատասխանեցի ես, <սուկ գիտական տեսանկյունից բոլոր մարդիկ մեքենաներ են, որոնք առաջնորդվում են արտաքին ազդեցություններով: Հարցն այն է, թե արդյոք կարելի՞ է ամբողջովին համաձայնվել այս գիտական տեսանկյունի հետ:

<Գիտական է, թե գիտական չէ՝ ինձ համար միևնույն է>,- ասեց Գ.-ն: <Ուզում եմ, որ հասկանաս, թե ինչ է նկատի ունեմ: Նայիր, բոլոր այս մարդիկ>,- նա ցույց տվեց փողոցի ուղղությամբ, <պարզապես մեքենաներ են, ոչ ավելին>:

<Կարծում եմ հասկանում եմ, թե ինչ նկատի ունեք>,- ասեցի ես: <Հաճախ մտածել եմ այն մասին, թե որքան քիչ բան կա աշխարհում, որք, ընտրելով իր ուրույն ուղին, կարող է ընդդեմ գնալ նման մեքենայացմանը >:

<Այստեղ դուք մեծապես սխալվում ես>,- ասեց Գ.-ն: <Դուք կարծում եք, որ կա այնպիսի մի բան, որն ընտրում է իր ուղին և կարող է ընդդիմանալ մեքենայացման գործընթացին: Դուք կարծում եք, որ ամեն ինչ չէ, որ հավասարապես մեքենայացված է>:

<Ինչ՞, իհարկե ոչ>,- բացականչեցի ես: <Արվեստը, պոեզիան, միտքը երևույթներ են, որոնք ենթարկվում են այլ օրենքների>:

<—Ենթարկվում են հենց նույն օրենքներին >,- ասեց Գ.-ն: < Այս գործունեությունները ամեն ինչի պես մեքենայացված են ք: Մարդիկ մեքենաներ են և մեքենաներից միայն մեխանիկական գործողություն կարելի է ակնկալել>:

<Շատ լավ, բայց չկա՞ն արդյոք մարդիկ, ովքեր մեքենաներ չեն>: <Հնարավոր է որ լինեն նման մարդիկ>,- ասեց Գ.-ն, <սակայն դրանք այն մարդիկ չեն, ում դուք տեսնում ես: Եվ դուք նրանց չեք ճանաչում: Հենց սա եմ ցանկանում, որ դու հասկանաք>:

Ինձ շատ տարօրինակ թվաց այն փաստը, որ Գ.-ն նման համառությամբ էր մոտենում այս հարցին: Այն, ինչ նա ինձ ասեց, ակնհայտ էր և անհերքելի: Միևնույն ժամանակ ինձ դուր էին գալիս նման հակիրճ և ամփոփ փոխաբերությունները: Դրանցում միշտ բացակայում էին տարբերությունների տարրերը: Մյուս կողմից, ես միշտ կարծել եմ, որ ամենակարևոր պայմանը եղել է տարբերությունների առկայությունը, մտածելով, որ երևույթները հասկանալու համար առաջին հերթին անհրաժեշտ է տեսնել հենց դրանք իրարից տարբերակող տարրերը: Այդ պատճառով ինձ տարօրինակ թվաց այն, որ Գ.-ն համառորեն պնդում էր մի գաղափար, որն այսպես թե այնպես ակնհայտ էր, իհարկե միայն այն դեպքում, եթե տվյալ գաղափարը չէր ընհանրացվում, և հնարավոր էին բացառություններ:

<Մարդիկ շատ տարբեր են>, - ասեցի ես: <Չեմ կարծում հնարավոր լինի նրանց բոլորին ընդգրկել մեկ վերնագրի ներքո: Կան վայրենիներ, մեքենայացված մարդիկ, մտավորականներ, տաղանդներ>:

< Միանգամայն ճիշտ եք>,- ասեց Գ.-ն, < մարդիկ տարբեր են, բայց իրական տարբերությունը դուք չգիտեք, թե որն է և չեք էլ տեսնում: Այն տարբերությունը, որի մասին դուք եք նշում, գոյություն չունի: Անհրաժեշտ է դա գիտակցել: Բոլոր այն մարդիկ ում տեսնում և ճանաչում եք, կամ *ու՛մ հետ հնարավոր է ծանոթանաք*, մեքենաներ են, իսկական մեքենաներ, որոնք գործում են, ինչպես դուք ասեցիք, արտաքին ազդեցությունների ներքո: Մեքենա են ծնվում, մեքենա էլ կմեռնեն: Իչպե՞ս են վայրենիները և մտավորականները հասել այդ աստիճանին: Նույնիսկ այս պահին՝ մեր զրույցի ընթացքում միլիոնավոր մեքենաներ փորձում են վերացնել միմյանց: Ո՞րն է նրանց միջև եղած տարբերությունը: Որտե՞ղ են վայրենիները և որտե՞ղ՝ մտավորականները: Նրանք բոլորն էլ նույնն են...

<Սակայն հնարավոր է դադարել մեքենա լինելուց: Հենց դրա մասին պետք է մտածենք, այլ ոչ թե գոյություն ունեցող տարբեր մեքենաների մասին: Իհարկե կան տարբեր մեքենաներ՝ ավտոմեքենան մեքենա է,

գրամոֆոնը մեքենա է, ատրճանակը մեքենա է: Է հետո ինչ: Դրանք բոլորն էլ նույնն են՝ բոլորն էլ մեքենա են»:

Այս գրույցի հետ կապված ես հիշում եմ մեկ այլ դրվագ:

<Ինչ՞ կարծիքի եք ժամանակակից հոգեբանության վերաբերյալ>,- մի անգամ հարցրեցի ես Գ.-ին՝ նպատակ ունենալով բացել հոգեվերլուծության քննարկման թեման, որը ինձ վստահություն չէր ներշնչել ծագման հենց առաջին պահից: Բայց Գ.-ն թույլ չտվեց ինձ այդքան հեռու գնալ:

<Մինչ հոգեբանությունից խոսելը, պետք է հասկանալ, թե այն ում է վերաբերում և ում չի վերաբերում>, - ասեց նա: <Հոգեբանությունը վերաբերում է մարդկանց, մարդկային էակներին: Ինչպիսի՞ հոգեբանության (նա ընդգծեց այս բառը) մասին կարող ենք մենք խոսել, երբ գործ ունենք մեքենաների մասին: Մեքենաների ուսումնասիրության համար անհրաժեշտ է մեխանիկա: Այդ պատճառով էլ մենք սկսում ենք մեխանիկայից: Մինչ հոգեբանություն դեռ շատ կա>:

<Կարո՞ղ է մարդ դադարել մեքենա լինելուց>, - հարցրեցի ես:

<Վերջապես>,- բացականչեց Գ.-ն: <Դա լավ հարց է: Եթե հաճախ նման հարցեր տայիք, միգուցե մեր գրույցներում մենք ինչ-որ հայտարարի գայինք: Հնարավոր է դադարել մեքենա լինելուց, բայց առաջին հերթին անհրաժեշտ է ճանաչել մեքենային: Մեքենան, իսկական մեքենան, ինքն իրեն չի ճանաչում, չի էլ կարող ճանաչել: Եթե մեքենան ճանաչում է ինքն իրեն, այն այլևս մեքենա չէ, համենայն դեպս ոչ այնքան, որքան նախկինում ~~պէս~~: Այն սկսում է արդեն պատասխանատվություն զգալ իր գործողությունների համար>:

<Ըստ Ձեզ, սա նշանակում է որ մարդը պատասխանատու չէ՞ իր գործողությունների համար>, - հարցրեցի ես:

<Մարդը (նա շեշտեց այս բառը) պատասխանատու է: Իսկ *մեքենան* պատասխանատու չէ>:

Մեկ ժամվա գրույցի ընթացքում ես հարցրեցի Գ.-ին. <Ձեր մեթոդի ուսումնասիրության համար ինչպիսի՞ պատրաստվածություն է անհրաժեշտ: Օրինակ՝ օգտակար է արդյո՞ք, այսպես կոչված, <գաղտնի> և <միատիկ> գրականության ուսումնասիրությունը>:

Այս հարցը տալիս՝ ես նկատի ունեի հատկապես <Տարոն> և <Տարոյին> վերաբերող գրականությունը:

<Այո>, ասեց Գ.-ն: <Կարդալով շատ բան կարելի է իմանալ: Օրինակ, վերցնենք ձեր դեպքը, դուք արդեն շատ բան կիմանայիք, եթե *իմանայիք ինչպես կարդալ*: Նկատի ունեմ, որ, եթե հասկացած լինեիք այն ամենը ինչ կադրացել էք ամբողջ կյանքի ընթացքում, ապա արդեն կիմանայիք, թե ինչ էք փնտրում: Եթե հասկանայիք այն ամենը, ինչ գրել էք ձեր գրքում, ինչպես էր կոչվում այն>, - նա ինչ-որ անհնարին բառ ստեղծեց, - <Tertium Organum, ապա ես կխոնարհվեի ձեր առջև և կխնդրեի ուսուցանել ինձ: Բայց դու ոչ հասկանում էք ինչ էք կարդում, ոչ էլ հասկանում էք, թե ինչ էք գրում: Դուք նույնիսկ չեք հասկանում, թե <հասկանալ> բառը ինչ է նշանակում: Մինչդեռ

հասկանալը նշանակալից է, և կարդալը կարող է օգտակար լինել միայն այն դեպքում, եթե հասկանում ես, թե ինչ էս կարդում: Մակայն, իհարկե, ոչ մի գիրք իրական պատրաստվածություն չի կարող տալ: Այդ պատճառով անհնար է ասել, թե որն է ավելի լավ: Այն ինչ մարդը լավ գիտի (նա ընդգծես <լավ> բառը) հենց դա է նրա պատրաստվածությունը: Եթե մարդը գիտի, ինչպես լավ սուրճ պատրաստել, կամ կոշիկներ նորոգել, ապա արդեն հնարավոր է խոսել նրա հետ: Խնդիրն այն է, որ ոչ ոք ոչինչ լավ չգիտի անել: Այն ամենը ինչին տիրապետում են, մակերեսային է>: Մա ևս մեկ անսպասելի շրջադարձ էր Գ.-ի բացատրություններում: Գ.-ի խոսքերը, իրենց սովորական իմաստից բացի, անկասկած պարունակում էին մեկ այլ՝ ամբողջովին այլ, իմաստ: Ես արդեն սկսել էի հասկանալ, որ որպեսզի ընկալեի Գ.-ի խոսքերի թաքնված իմաստը, պետք է սկզբում հասկանալ նրանց ուղղակի իմաստը: Գ.-ի խոսքերի ուղղակի իմաստը միշտ կարևոր էր, սակայն դրանով չէր սահմանափակվում նրանց ողջ բովանդակությունը: Դրանց առավել լայն և խորունկ իմաստը երկար ժամանակ դեռ թաքնված էր:

Կա ևս մի գրույց, որ մնացել է իմ հիշողության մեջ:

Ես հարցրեցի Գ.-ին, թե ինչ պետք է մարդն անի այս ուսմունքի՞ն յուրացնելու համար:

<Ինչ անե՞լ>, - հարցրեց Գ.-ն զարմացած: <Հնարավոր չէ որևէ բան անել: Առաջին հերթին մարդը պետք է հասկանա որոշակի բաներ: Նա ունի հազարավոր կեղծ գաղափարներ և կեղծ պատկերացումներ, գլխավորապես ինք իր մասին, և մինչ նոր գիտելիքներ ձեռք բերելը, պետք է հրաժարվի դրանցից մի քանիսից: Այլապես, նորը կկառուցվի սխալ հիմքի վրա, և արդյունքը՝ նախկինի համեմատ, ավելի վատը կլինի: >

<Ինչպե՞ս կարելի է ազատվել կեղծ գաղափարներից>,-հարցրեցի ես: <Մենք կախվածության մեջ ենք գտնվում մեր ընկալման ձևերից: Կեղծ գաղափարները ձևավորվում են մեր ընկալման ձևերի հիման վրա>:

Գ.-ն տարուբերեց գլուխը:

<Կրկին դուք մեկ այլ բանից եք խոսում>,- ասեց նա: <Դու խոսում ես ընկալումներից բխող սխալների մասին, իսկ ես դա ի նկատի չունեմ: Տվյալ ընկալումների շրջանակներում մարդը քիչ թե շատ կարող է շփոթվել: Ինչպես արդեն ասեցի, մարդու գլխավոր մոլորությունը նրանում է, որ նա համոզված է, որ կարող է անել: Բոլոր մարդիկ կարծում են, որ իրենք կարող են անել, բոլոր մարդիկ ցանկանում են անել, և առաջին հարցը, որ մարդիկ տալիս են այն է, թե ինչ է անհրաժեշտ անել: Բայց իրականում ոչ ոք ոչինչ չի անում և ոչ ոք չի կարող որևէ բան *անել*: Մա շատ կարևոր է և պետք է հասկանալ: *Ամեն բան տեղի է ունենում*: Այն ամենը, ինչ պատահում է մարդու հետ, այն ամենը ինչ նա անում է, այն ամենը ինչ նրանից է բխում՝ *տեղի է ունենում*: Եվ դա տեղի է ունենում ճիշտ այնպես, ինչպես անձրևն է գալիս, որը բարձր ոլորտների մթնոլորտի կամ ամպերի ջերմաստիճանի փոփոխության արդյունք է, այնպես ինչպես ձյունն է հալվում արևի շողերից, ինչպես քամին է բարձրացնում փոշին:

Մարդը մեքենա է: Բոլոր նրա արարքները, գործողությունները, խոսքերը, մտքերը, զգացմունքները, համոզմունքները, կարծիքները և

սովորությունները արտաքին ազդեցությունների, արտաքին տպավորությունների արդյունք են: Ինքնուրույն մարդը չի կարող նույնիսկ մեկ միտք արտահայտել: Այն ամենը ինչ նա ասում է, անում, մտածում, զգում պարզապես տեղի է ունենում: Մարդը չի կարող որևէ բան բացահայտել կամ որևէ բան հորինել: Ամեն ինչ ուղղակի ինքն իրեն տեղի է ունենում:

Հաստատել այս փաստը, հասկանալ այն, համոզվել դրա ճշմարտության մեջ՝ նշանակում է ազատվել մարդուն վերաբերող հազարավոր խաբկանքներից, այն համոզմունքից, որ մարդը ստեղծագործ է և գիտակցաբար կազմակերպում է իր կյանքը և այլն: Նման բան գոյություն չունի: Ամեն ինչ պարզապես տեղի է ունենում. ժողովրդական շարժումները, պատերազմները, հեղափոխությունները, կառավարության փոփոխումը՝ այս ամենը տեղի է ունենում: Եվ այդ ամենը նույնպես պատահում է այնպես, ինչպես առաձին անհատի կյանքում: Մարդը ծնվում է, ապրում, մահանում, կառուցում տներ, գրում գրքեր ոչ թե այնպես, ինչպես ինքն է ցանկանում, այլ այնպես, ինչպես պատահում է: Ամեն ինչ ուղղակի պատահում է: Մարդը չի սիրում, ատում, փափագում. ամեն բան պատահում է:

Բայց ոչ ոք երբևիցե չի հավատա քեզ, եթե դու նրան ասես, որ ոչինչ չի կարող անել: Մա ամենավիրավորական և տհաճ բանն է, որ կարող ես որևէ մեկին ասել: Այն մասնավորապես վիրավորական և տհաճ է, քանի որ ճշմարտություն է, իսկ ճշմարտությունն-ինանալ ոչ ոք չի ցանկանում:

Երբ դուք հասկանաք սա, մեզ համար ավելի հեշտ կլինի գրուցել: Բայց մի բան է հասկանալ սա ուղեղով, մեկ այլ բան է <ողջ էությանմբ > զգալ, լիովին համոզվել, որ դա այդպես է և երբևիցե չմոռանալ դրա մասին:

Անելու (Գ.-ն ընդգծեց այս բառը) ինդրի հետ նաև մեկ այլ բան է կապված: Մարդկանց միշտ թվում է, որ ուրիշները միշտ այնպես չեն անում, ինչպես հարկավոր է: Բոլորը կարծում են, որ նրանք կարող են նույն բանը ավելի լավ անել: Նրանք չեն հասկանում և չեն էլ ցանկանում հասկանալ, որ այն ամենը ինչ արվում է, և մասնավորապես այն ամենը ինչ *արդեն արվել է*, չի կարող և չէր էլ կարող արվել մեկ այլ կերպ: Նկատել էք, թե ինչպես են բոլորը խոսում պատերազմից: Յուրաքանչյուրն ունի իր ծրագիրը, իր տեսությունը: Բոլորը կարծում են, որ ոչինչ այնպես չի արվում, ինչպես պետք է արվի: Իրականում ամեն բան արվում է միայն այնպես, ինչպես կարող է արվել: Եթե հնարավոր լիներ որևէ մի բան փոխել, ապա ամեն բան այլ կերպ լինել, և միգուցե պատերազմ էլ չլիներ:

Փորձեք հասկանալ, թե ինչ եմ ասում. ամեն բան կախված է մեկ այլ բանից, ամեն ինչ փոխկապակցված է, ոչինչ անջատ չի կարելի դիտարկել: Այդ պատճառով էլ ամեն բան ընթանում է միայն այնպես ինչպես կարող է ընթանալ: Եթե մարդիկ ուրիշ լինեին, ամեն ինչ այլ կերպ կլիներ: Նրանք այնպիսին են, ինչպիսին որ կան, հետևաբար ամեն բան այնպես է, ինչպես որ կա>:

Այս ամենը դժվար էր մարսել:

< Արդյո՞ք որևէ բան հնարավոր չէ անել>,- հարցրեցի ես:

< Բացարձակապես ոչինչ>:

<Բսկ Արդյո՞ք ոչ ոք չի կարող որևէ բան անել>:

<Սա այլ հարց է: Որպեսզի մարդը կարողանա որևէ բան անել, նա պետք է լինի: Անհրաժեշտ է նախ հասկանալ, թե ինչ է նշանակում *լինելը*: Եթե մենք շարունակենք մեր զրույցը, դուք կհասկանաք, որ մենք հատուկ լեզու ենք օգտագործում. և որպեսզի մեզ հետ կարողանաք հաղորդակցվել, անհրաժեշտ է սովորել այդ լեզուն: Իմաստ չունի սովորական լեզվով խոսելը, քանի որ այդ լեզվով հնարավոր չէ իրար հասկանալ: Ձեզ այս պահին դա տարօրինակ կթվա: Սակայն դա ճշմարտությունն է: Հասկանալու համար անհրաժեշտ է մեկ այլ լեզու սովորել: Դուք ավելիքի ուշ կհասկանաք, թե ինչու:

Բացի այդ պետք է սովորել ճշմարտությունն ասել: Սա ևս տարօրինակ է թվում ձեզ: Դուք չեք գիտակցում, որ անհրաժեշտ է սովորել ճշմարտությունն ասել: Ձեզ թվում է, որ բավական է ցանկանալ կամ որոշել այդպես վարվել: Պետք է ասեմ, որ մարդիկ համեմատաբար հազվադեպ են միտումնավոր խաբում: Շատ դեպքերում նրանք կարծում են, որ ճշմարտությունն են ասում: Նրանք անընդհատ խաբում են, և այն ժամանակ, երբ ցանկանում են խաբել, և այն ժամանակ, երբ ցանկանում են ճիշտն ասել: Նրանք անընդհատ են խաբում՝ իրենք իրենց և ուրիշներին: Այդ պատճառով էլ ոչ ոք չի հասկանում ոչ ինքն իրեն, ոչ էլ ուրիշներին: Ինքներդ Մտածեք. արդյո՞ք նման տարածայնություններ կլինեիր, նման խորունկ թյուրիմացություն և ատելություն այլ մարդկանց կարծիքների և տեսանկյունների հանդեպ, եթե նրանք հասկանային իրար: Բայց նրանք չեն հասկանում, քանի որ չեն դադարում խաբել: Ճիշտ խոսելը ամենբարդ գործն է աշխարհում: Անհրաժեշտ են մեծ ջանքեր և երկար տարիների աշխատանք: Միայն ցանկությունը բավարար չէ: *Ճշմարիտ խոսելու համար անհրաժեշտ է իմանալ, թե ինչ է ճշմարտությունը և ինչ՝ խաբեությունը, և առաջին հերթին այդ բացահայտումն անել քո ներսում*: Սակայն ոչ ոք չի ցանկանում դա իմանալ >:

Գ.-ի հետ զրույցները, և անսպասելի շրջադարձը, որ նա կատարում էր յուրաքանչյուր մտքի հետ կապված, ինձ ավելի ու օրեցօր ավելի էին հետաքրքրում: Բայց ես պետք է մեկնեի Պետերբուրգ:

Հիշում եմ իմ վերջին զրույցը նրա հետ:

Ես նրան շնորհակալություն հայտնեցի ինձ ուշադրություն հատկացնելու, ինչպես նաև այն բացահայտությունների համար, որոնք արդեն շատ բան էին փոխել ինձ մեջ:

<Բայց միևնույնն է, գիտեք, ամենակարևորը փաստերն են>, - ասեցի ես:

< Եթե կարողանայի տեսնել իրական փաստեր, որոնք ինձ համար նոր են և անհայտ, ապա միայն այդ դեպքում վերջնականապես կհամոզվեի, որ ճիշտ ճանապարհի վրա եմ>:

Ես կրկին մտածում էի <հրաշքների> մասին:

<Փաստեր կլինեն>, - ասեց Գ.-ն: <Ես խոստանում եմ ձեզ: Սակայն սկզբում շատ այլ բաներ են հարկավոր>:

Ես այն ժամանակ չհասկացա նրա վերջին խոսքերը, ես դրանք հասկացա միայն ավելի ուշ, երբ բախվեցի <փաստերի> հետ. Գ.-ն

կատարեց իր խոստումը: Մակայն դա տեղի ունեցավ մեկ ու կես տարի անց, 1916թ-ի օգոստոսին:

Մոսկվայում ունեցած վերջին զրույցներից կա ևս մեկը, որը մնացել է հիշողությանս մեջ: Գ.-ն կրկին մի քանի բան ասեց, որոնք ինձ համար պարզ դարձան միայն ավելի ուշ:

Նա խոսում էր մի մարդու մասին, ում ես հանդիպել էի երբ Գ.-ի հետ էի, նա խոսում էր որոշ մարդկանց հետ ունեցած իր հարաբերությունների մասին ց:

«Նա թույլ մարդ է», - ասեց Գ.-ն: «Մարդիկ դրանից օգտվում են, ոչ գիտակցաբար իհարկե: Եվ դրա պատճառը այն է, որ նա բոլորին հաշվի է առնում: Եթե նա նրանց հաշվի չառներ, ամեն ինչ այլ կերպ կլիներ, և նրանք ինքներն այլ կլինեին:

Ինձ համար տարօրինակ թվաց այն, որ մարդիկ պետք է հաշվի չառնեն այլ մարդկանց:

«Ի՞նչ նկատի ունեք <հաշվի առնել> ասելով», - հարցրեցի ես: Հասկանում և եմ, և միևնույն ժամանակ չեմ հասկանում ձեզ: Այս արտահայտությունը ունի տարբեր իմաստներ>:

«Բոլորովին», - ասեց Գ.-ն: «Այն ունի միայն մեկ իմաստ: Փորձեք մտածել>:

Ավելի ուշ ես հասկացա, թե ինչ նկատի ունեք Գ.-ն <հաշվի առնել> ասելով, գիտակցեցի նաև, թե ինչ մեծ տեղ է զրավում դա մարդու կյանքում և որքան բաների սկիզբ այն կարող է դնել: Գ.-ն <հաշվի առնել> ասելով ի նկատի ունեք այն մոտեցումը, որը ստեղծում է ներքին ստրկություն, ներքին կախվածություն: Ավելի ուշ մենք հնարավորություն ունեցանք առավել խորությամբ քննարկելու այս հարցը:

Հիշում եմ ևս մեկ զրույց պատերազմի մասին: Մենք նստած էինք Ֆիլիպովի սրճարանում՝ Տվերսկայա փողոցում: Այն լի էր մարդկանցով և շատ աղմկոտ էր: Պատերազմը, չարաշահորդները տհաճ և տենդային մթնոլորտ էին ստեղծել: Ես նույնիսկ չէի ցանկանում այնտեղ գնալ: Գ.-ն պնդեց, և ինչպես միշտ, ես չէի կարող ընդդիմանալ նրան: Ես արդեն գլխի էի ընկել, որ Գ.-ն երբեմն նույնիսկ միտումնավոր էր ստեղծում դժվար պայմաններ, կարծես ինձնից պահանջելով որոշակի լրացուցիչ ջանքեր և պատրաստակամություն, ստիպելով ընտելանալ տհաճ և անհարմար միջավայրին՝ *պարզապես նրա հետ զրուցելու համար*:

Մակայն այս անգամ արդյունքը այդքան էլ փայլուն չէր, քանի որ աղմկոտ էր, և ես բաց թողեցի նրա խոսքերի ամենակարևոր մասը: Սկզբում ես հասկանում էի, թե ինչ էր ասում Գ.-ն: Բայց հետզհետե սկսեցի կորցնել մտքի թելը: Նրա նկատառումները, որոնցից ընդամենը մի քանի առանձին բառեր հասան ինձ, հասկանալու որոշ փորձեր կատարելուց հետո ես դադարեցի ունկնդրել և սկսեցի հետևել, թե *ինչպես է խոսում նա*:

Զրույցը սկսվեց իմ այն հարցից, թե <Հնարավո՞ր է արդյոք դադարեցնել պատերազմը>: Եվ Գ.-ն պատասխանեց. <Այո, *հնարավոր է*>:

Մինչդեռ նախորդ գրույցների վրա հիմնվելով՝ ես գրեթե համոզված էի, որ նա կպատասխաներ <Ոչ, հնարավոր չէ>:

<Սակայն հարցն այն է, թե ինչպե՞ս>,- ասաց նա: Դա հասկանալու համար շատ բան է անհրաժեշտ իմանալ: Ի՞նչ է պատերազմը: *Դա մոլորակների ներազդեցության հետևանք է:* Ինչ-որ տեղ այնտեղ վերևում մոլորակները իրար շատ են մոտեցել. ստեղծվում է լարվածություն: Չգացել եք արդյո՞ք, որ երբ մարդը, նեղ մայթով անցնելիս շատ մոտ է քայլում ձեզ, որքան եք լարվում: Մոլորակների միջև նույնպես ստեղծվում է նմանատիպ լարում: Նրանց դեպքում դա տևում է մեկ-երկու վայրկյան: Բայց այստեղ՝ Երկիր մոլորակի վրա, մարդիկ սկսում են իրար մոտեցել և դա կարող է մի քանի տարի տևել: Մարդկանց թվում է, թե իրենք ատում են միմիանց, կամ որ պետք է մոտեցել իրար ինչ-որ վեհ նպատակի համար, որ պետք է պաշտպանել ինչ-որ մեկին կամ ինչ-որ բան, որ շատ ազնվաբարո է վարվում, կամ մեկ այլ նմանատիպ որևէ մի բան: Նրանք չեն գիտակցում, որ ընդամենը խաղաքարեր են այս խաղում: Նրանց թվում է, որ իրենք ինչ-որ նշանակություն ունեն, կարող են տեղաշարժվել ինչպես ցանկանան, որ կարող են որոշումներ կայացնել, անել այս կամ այն: Սակայն իրականում բոլոր նրանց արարքները, գործողությունները մոլորակների ներազդեցության արդյունք են: Իրենք իրենցից, բառիս բուն իմաստով, որևէ նշանակություն չեն ներկայացնում: Լուսինը նույնպես մեծ դեր է խաղում այստեղ: Բայց լուսնից մենք առանձին կխոսենք: Սակայն պետք է հասկանալ, որ ոչ Վիլիելմ կայսրը, ոչ հրամանատարները, ոչ նախարարները, ոչ խարհրդարանները որևէ բան չեն կարող անել և նշանակություն չունեն: Այն ամենը, ինչ տեղի է ունենում, մեծամասամբ դեկավարվում է արտաքինից և ազդեցությունների պատահական համադրման կամ համընդհանուր տիեզերքական օրենքների հետևանք է>:

Սա էր այն ամենը, ինչ ես լսեցի: Միայն ավելի ուշ հասկացա, թե նա ինչ էր ցանկանում ասել ինձ, այսինքն՝ ինչպես կարելի է փոխել պատահական ազդեցությունների ուղղությունը կամ որոշ չափով վնասազերծել դրանք: Դա իսկապես շատ հետաքրքիր միտք էր, որը կապված էր <գոհաբերության> էզոթերիկ հասկացության հետ: Սակայն, բոլոր դեպքերում, ներկայումս այն ընդամենը պատմական և հոգեբանական արժեք ուներ: Իմ կարծիքով մեծ նշանակություն ունեին Գ.-ի կողմից ի միջիայլոց նշված խոսքերը, որոնք ես նույնիսկ անմիջապես չմտապահեցի և միայն հիշեցի ավելի ուշ՝ նրա հետ իմ ունեցած գրույցը վերականգնելիս, այն է՝ մոլորակի և մարդկանց համար գոյություն ունեցող ժամանակի տարբերությունը:

Նույնիսկ հիշելուց հետո, երկար ժամանակ չէի կարողանում հասկանալ այդ մտքի ամբողջական իմաստը: Ավելի ուշ պարզ դարձավ, որ շատ բան է հիմնված դրա վրա:

Այդ ընթացքում ես ցնցված էի *Արևի, մոլորակների* և *Լուսնի* վերաբերյալ գրույցից: Ես չգիտեմ, թե ինչպես սկիզբ առավ այս գրույցը:

Սակայն հիշում եմ, որ Գ.-ն նկարեց մի փոքր գծապատկեր և փորձեց բացատրել, ինչպես նա էր կոչում, <ուժերի հարաբերակցությունը տարբեր աշխարհներում>: Սա կապված էր նախկին գրույցի, այսինքն՝ մարդկության վրա արտաքին ազդակների ազդեցության հետ: Գաղափարը մոտավորապես այսպիսին էր. մարդկությունը, ավելի ճիշտ *օրգանական կյանքը Երկիր մոլորակի վրա*, միաժամանակ ազդեցություն է կրում տարբեր աղբյուրներից և տարբեր աշխարհներից: Ազդեցության աղբյուրը կարող են լինել մոլորակները, լուսինը, արևը, աստղերը: Բոլոր այս ազդեցությունները միաժամանակ են գործում. ազդեցություններից մեկը գերակշռում է որոշ ժամանակ, իսկ մյուս պահերին մեկ այլ ազդեցություն է գերակշռում: Եվ մարդիկ ազդեցությունների միջև ընտրություն կատարելու հնարավորություն ունեն. այլ կերպ ասած՝ նրանք կարող են մեկ ազդեցության տակից անցնել մեկ այլ ազդեցության տակ:

<Որպեսզի բացատրեմ, թե *ինչպես*, շատ երկար պիտի խոսեմ>,- ասեց Գ.-ն: Սրա մասին մենք ավելի ուշ կխոսենք: Այս պահին ես ցանկանում եմ որպեսզի դուք մեկ բան հասկանաք՝ անհնար է ազատվել մեկ ազդեցությունից և չընկնել մեկ այլ ազդեցության տակ: Ողջ խնդիրը՝ ինքդ քեզ վրա աշխատելու գործընթացը, բաղկացած է ազդեցությունների միջև ընտրություն կատարելու գործընթացից, որին կցանկանայինք ենթարկվել, ինչպես նաև այդ ազդեցության տակ ընկնելու գործընթացից: Հետևաբար անհրաժեշտ է իմանալ նախօրոք, թե որ ազդեցությունն է առավել շահավետ>:

Այս գրույցում ինձ հետաքրքրեց այն, որ Գ.-ն այնպես էր խոսում մոլորակներից և Լուսնից, կարծես դրանք կենդանի էակներ լինեին, որոնք ունեին հստակ սահմանված տարիք, հստակ սահմանված կյանքի տևողականություն և գոյության այլ մակարդակներին անցնելու հնարավորություն: Նա խոսում էր այնպես, կարծես Լուսինը <կենսագուրկ> մոլորակ չէր, ինչպես ընդունված է համարել, այլ հակառակը <նորածին մոլորակ>, մոլորակ, որը գտնվում էր իր զարգացման սկզբնական փուլում և դեռևս չէր հասել Երկիր մոլորակի բանականության աստիճանին>, - ինչպես բացատրեց նա:

<Սակայն Լուսինը մեծանում և զարգանում է>, - ասեց Գ.-ն, <և միգուցե ժամանակի ընթացքում այն Երկիր մոլորակի պես դառնա: Այնուհետև, նրա մոտ կառաջանա մեկ նոր Լուսին, իսկ Երկիր մոլորակը կստանան հարևան Արևի դերը: Ժամանակին Արևը նման էր Երկիր մոլորակին, իսկ Երկիր մոլորակը՝ Լուսնին: Իսկ դրանից ավելի վաղ շրջանում Արևը նման էր Լուսնին>:

Սա անմիջապես գրավեց իմ ուշադրությունը: Ես առավել արհեստական, անվստահելի և դոգմատիկ տեսություն մոլորակների և Արեգակնային համակարգի վերաբերյալ դեռևս չէի հանդիպել, սկսած Կանտ- Լապլասի տեսությունից, մինչև ամենավերջին տեսությունները՝ բոլոր իրենց հավելումներով և տարբերակներով: <Հանրությունը> այս տեսությունները, կամ համենայն դեպս այս տեսություններից վերջինը, համարում է գիտական և ապացուցված: Սակայն իրականում այս տեսություններից առավել քիչ գիտական և առավել քիչ ապացուցված որևէ

բան գոյություն չունի: Այդ պատճառով Գ.-ի համակարգը, ամբողջովին թեկ այլ՝ *օրգանական* տեսության վրա հիմնված լինելով, բոլորովին նոր ակունքներ ունենալով և տիեզերական մեկ այլ համակարգ ներկայացնելով, ինձ չափազանց հետաքրքրական և կարևոր թվաց:

<Ի՞նչ հարաբերակցության մեջ են գտնվում Երկիր մոլորակի և արևի գիտակցությունները>, - հարցրեցի ես:

<Արևի գիտակցությունը աստվածային է>,- ասեց Գ.-ն: <Եվ Երկիր մոլորակը նույնպես կարող է այդպիսին դառնալ: Սակայն դա իհարկե երաշխավորված չէ. Երկիր մոլորակը, որևէ բան ձեռք չբերելով, կարող է մահանալ:

<Իսկ դա ինչի՞ց է կախված>,- հարցրեցի ես:

Գ.-ն շատ անորոշ պատասխան տվեց:

<Կա որոշակի ժամանահակահատված>, - ասեց նա, <որի ընթացքում պետք է որոշակի գործողություններ կատարել: Եթե դա որոշակի ժամանակահատվածում չիրագործվի, Երկիր մոլորակը կարող է կործանվել՝ առանց ձեռք բերելու այն, ինչ կարող էր ձեռք բերել>:

<Այդ ժամանակահատվածը հայտնի՞ է>, - հարցրեցի ես:

<Այն հայտնի է>,- ասեց Գ.-ն: Բայց դրա մասին տեղեկացված լինելը որևէ առավելություն չէր տա մարդկանց: Այն իրավիճակը նույնիսկ կվատթարացներ: Ոմանք կհավատային դրան, մյուսները չէին հավատա, իսկ ոմանք էլ ապացույցներ կպահանջեին: Այնուհետև կսկսեին իրար գլուխ կոտրել: Մարդկանց մոտ ամեն ինչ միշտ նման ավարտ է ունենում>:

Մոսկվայում միևնույն ժամանակ մենք հետաքրքիր զրույցներ վարեցինք արվեստի վերաբերյալ: Դրանք կապված չէին այն պատմության հետ, որն ինձ համար ընթերցեցին Գ.-ի հետ հանդիպման առաջին օրը:

Մի օր Գ.-ն ինձ ասեց. <Այս պահին ձեզ համար դեռ պարզ չէ՞, որ Երկիր մոլորակի վրա ապրող մարդիկ կարող են շատ տարբեր մակարդակների պատկանել, չնայած այն բանի, որ արտաքինապես նրանք բացարձակապես նույնն են: Ինչպես մարդկանց դեպքում, այնպես էլ արվեստի՝ գոյություն ունեն տարբեր մակարդակներ: Ներկայումս դուք չեք պատկերացնում, թե մակարդակների միջև եղած տարբերությունները որքան ավելի մեծ են, քան պատկերացնում ես: Դուք տարբեր իրողությունները միևնույն դասին եք վերագրում՝ կարծելով, որ այս դասերը հասանելի են ձեզ:

Այն, ինչ դուք եք արվեստ կոչում, ես արվեստ չեմ համարում, քանի որ այն պարզապես բնության կամ այլ մարդկանց մեխանիկական վերարտադրությունն է, դրանց կրկնօրինակումը, կամ պարզապես երևակայություն, օրիգինալ երևալու փորձ: Իրական արվեստը այլ բան է: Արվեստի գործերը, հատկապես անտիկ արվեստի գործերը, հնարավոր չէ բացատրել, դրանք պարունակում են մի բան, որը առկա չէ ժամանակակից արվեստի գործերում: Բայց քանի որ դուք տարբերությունը չեք գիտակցում, ապա շուտով մոռանում եք այն և շարունակում ամենինչին վերաբերվել որպես արվեստի տեսակ: Ձեր արվեստում ամեն ինչ սուբյեկտիվ է՝ նկարչի

կողմից այս կամ այն զգացումների ընկալումը, այն ձևը, որով նա փորձում է արտահայտել իր զգացումները, ինչպես նաև այդ ձևի ընկալումը այլ մարդկանց կողմից: Միևնույն երևույթը նկարիչներից մեկը կարող է մի կերպ ընկալել, իսկ մյուսը՝ բոլորովին այլ կերպ: Միևնույն արևածագը մի նկարչի մոտ կարող է ուրախության զգացում առաջացնել, իսկ մյուսի մոտ՝ տրտմության զգացում: Երկու տարբեր նկարիչներ միևնույն զգայական ընկալումները կարող են արտահայտել օգտագործելով բացարձակապես տարբեր մեթոդներ, տարբեր միջոցները, և հակառակը՝ բացարձակապես տարբեր զգայական ընկալումները նրանք կարող են արտահայտել՝ օգտագործելով արտահայտման միևնույն միջոցները, կախված նրանից, թե ինչպես են նրանց սովորեցրել, կամ էլ՝ սովորացրածին հակառակ: Եվ դիտորդները, ունկնդիրները կամ ընթերցողները կընկալեն ոչ թե այն, ինչ նկարիչն էր զգում և ցանկանում հաղորդել, այլ այն գույությունները, որոնք առաջացնում է նկարիչը՝ իր զգացումների արտահայտման տարբեր միջոցներով: Ամեն ինչ սուբյեկտիվ է և ամեն ինչ պատահական է, այսինքն՝ հիմնված է պատահական գույությունների վրա՝ ինչպես նկարչի տպավորությունները և իր <ստեղծագործությունը> (նա շեշտեց <ստեղծագործություն> բառը), դիտորդների, ունկնդիրների կամ ընթերցողների ընկալումները:

Իսկական արվեստում պատահական ոչինչ չկա: Այն մաթեմատիկա է: Դրանում ամեն ինչ կարելի է հաշվարկել, ամեն ինչ կարելի է նախօրոք իմանալ: Նկարիչը *գիտի* և *հասկանում է*, թե ինչ է ցանկանում հաղորդել, և նրա աշխատանքը չի կարող մի տպավորություն գործել մի մարդու վրա և մեկ այլ տպավորություն՝ մեկ ուրիշի վրա, այն դեպքում, եթե տվյալ մարդիկ միևնույն մակարդակի վրա են գտնվում: Այն միշտ մաթեմատիկական ճշգրտությամբ միևնույն տպավորությունը կգործի:

Միաժամանակ արվեստի միևնույն գործը տարբեր տպավորություններ կթողնի տարբեր մակարդակների վրա գտնվող մարդկանց վրա: Ցածր մակարդակի վրա գտնվող մարդիկ երբեք չեն ստանա նույն տպավորությունը, որը կստանան բարձր մակարդակի վրա գտնվող մարդիկ: Սա է իրական, *օբյեկտիվ* արվեստը: Պատկերացրու մի որևէ գիտական աշխատանք՝ աստղագիտության կամ քիմիայի մասին մի գիրք: Հնարավոր չէ, որ որևէ մեկը այն մի կերպ ընկալի, մյուսը՝ մեկ այլ: Բոլոր այն մարդիկ ովքեր բավականին նախապատրաստված են և կարող են կարդալ այդ գիրքը կհասկանան, թե ինչ է ցանկանում հաղորդել հեղինակը, այնպես ինչպես հեղինակն է ցանկանում է հաղորդել այն: Օբյեկտիվ արվեստի գործը նման է այդիսի մի գրքի, ի տարբերություն որի այն ներգործում է ոչ միայն մարդու գիտակցության դաշտի վրա, այլ նաև՝ զգացմունքային>:

<Ներկայումս նման արվեստի գործեր գոյություն ունեն⁶>, - հարցրեցի ես:

<Իհարկե գոյություն ունեն>, - պատասխանեց Գ.-ն: <Եզիպտոսի Մեծն Սֆինքսը արվեստի այդպիսի գործերից է, կան նաև որոշ պատմական ճարտարապետական կառույցներ, աստվածների որոշ հուշարձաններ և շատ այլ բաներ: Գոյություն ունեն աստվածների քանդակներ և

դիցաբանական էակներ, որոնց կարելի է գրքի պես կարդալ, ոչ թե ուղեղով, այլ զգացմունքներով, սակայն միայն այն դեպքում, եթե դրանք բավարար զարգացած են: Կենտրոնական Ասիայում մեր ճամփորդությունների ժամանակ Հինդու Քուշ անապատի ստորտում մենք տեսանք մի շատ տարօրինակ քանդակ, որը սկզբում կարծեցինք, թե հին աստղված էր կամ սատանա: Սկզբում այն պարզապես հետաքրքրություն առաջացրեց մեզ մոտ: Սակայն, որոշ ժամանակ անց մենք սկսեցինք *զգալ*, որ այս քանդակը շատ ավելին էր պարունակում՝ մի մեծ, ամբողջական և բարդ տիեզերական համակարգ: Աստիճանաբար, քայլ առ քայլ, մենք սկսեցինք վերծանել այս համակարգը: Այն քանդակի մարմնում էր, ոտքերի, ձեռքերի, գլխի, աչքերի, ականջների մեջ՝ ամենուր: Ամբողջ արձանի մեջ որևէ պատահական բան չկար, ամեն ինչ իմաստավորված էր: Եվ աստիճանաբար մենք հասկացանք այս քանդակը ստեղծող մարդկանց նպատակը: Սկսեցինք զգալ նրանց մտքերը, նրանց զգացմունքները: Ամեն դեպքում, մենք հասկանում էինք այն ամենը, ինչ նրանք փորձել էին հաղորդել հազարամյակների ընթացքում, և ոչ միայն իմաստը, այլ դրա հետ կապված բոլոր զգացմունքները և հույզերը: Այ դա իսկապես արվեստ էր>:

Ինձ շատ էր հետաքրքրում այն, ինչ Գ.-ն պատմում էր արվեստի վերաբերյալ: Նրա կողմից արվեստի բաժանման *սկզբունքը* սուբյեկտիվի և օբյեկտիվի ինձ շատ բան էր ասում: Սակայն միննույն ժամանակ ես նրա խոսքերից ամեն բան չէ, որ հասկանում էի: Ես արվեստում միշտ որոշակի բաժանումներ և դասակարգումներ եմ նկատել, որոնք ես ոչ կարողացել եմ սահմանել, ոչ էլ ձևակերպել, և ոչ ոքի մինչ այժմ դա չի հաջողվել անել: Միննույն ժամանակ ես գիտեի, որ այս բաժանումները և դասակարգումները գոյություն ունեն: Եվ արվեստի մասին բոլոր քննարկումները առանց այս բաժանումների և դասակարգումների ինձ համար դատարկ և անիմաստ էին թվում՝ պարզապես բառերի մասին քննարկումներ: Գ.-ի խոսքերը տարբեր մակարդակների գոյության վերաբերյալ, որոնք մենք չենք նկատում և չենք հասկանում, ինձ ծանոթացրին այն ստորաբաժանումների հետ, որոնք ես զգացել էի, բայց չէի կարողացել սահմանել:

Ընդհանրապես Գ.-ի ասածներից ինձ շատ բան էր ապշեցնում: Կային գաղափարներ, որոնք ես չէի կարող ընդունել և, որոնք ինձ ֆանտաստիկ էին թվում ու անհիմն: Որոշ բաներ հակառակը՝ տարօրինակ կերպով համընկնում էին իմ մտքերի հետ, որոնց ես վաղուց էի հանգել: Ինձ առավել շատ էր հետաքրքրում նրա խոսքերի *կապակցվածությունը*: Ես արդեն զգացել էի, որ նրա մտքերը տարանջատված չէին մեկը մյուսից, ինչպես փիլիսոփայական և գիտական մտքերը, այլ կազմում էին մեկ ամբողջություն, որից ես առայժմ որոշ պատահներն էի տեսնում:

Դրա մասին էի խորհում նաև գիշերային գնացքում՝ Մոսկվայից Պետերբուրգ ճանապարհովելիս: Ես ինքս ինձ հարցնում էի արդյոք գտել էի այն, ինչ փնտրում էի: Հնարավոր էր արդյոք, որ Գ.-ն *իմանար* այն, ինչ անհրաժեշտ էր իմանալ՝ խոսքերից գործին, <փաստերին> անցնելու համար:

Ես որևէ բանում վստահ չեի , ոչ էլ կարող էի հստակ որևէ բան
ձևակերպել: Բայց ներքուստ համոզված էի, որ ինչ որ բան փոխվել էր ինձ
համար և որ այժմ ամեն բան այլ կերպ էր ընթանալու: